

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2016Թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

*Հրատարակվել է 3 մարտի, 2016թ*

**ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ**

Ըստ սահմանադրության Հայաստանը երկրի ընտրովի ղեկավար և միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով) ունեցող հանրապետություն է: 2015թ. դեկտեմբերի սահմանադրական հանրաքվեի արդյունքներով երկիրը մինչև 2018թ.-ը՝ նախագահի պաշտոնավարման ընթացիկ ժամկետի ավարտը, աստիճանաբար անցում է կատարելու կառավարման խորհրդարանական համակարգին: Ազգային ժողովում տեղերի մեծամասնությունը զբաղեցնում է Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որն առաջնորդվելով Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, շարունակում է գերիշխող դիրք զբաղեցնել երկրի քաղաքական կյանքում: Երկրում 2013թ. անցկացվեցին նախագահական, իսկ 2012թ.՝ օրենսդիր կառույցի ընտրություններ: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գնահատմամբ նախագահական ընտրությունները լավ էին կազմակերպված, սակայն կային թերություններ, այդ թվում՝ ոչ հավասար խաղի պայմաններ, քվեարկության օրը գրանցված լուրջ խախտումներ և ընտրական գործընթացի անաչառության վերաբերյալ մտահոգություններ: Նմանատիպ թերություններ էին արձանագրվել նաև 2012թ. խորհրդարանական ընտրությունների և 2015թ. սահմանադրական հանրաքվեի ընթացքում:

Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ:

Հուլիս 17-ին «Մասնա Ծոեր» զինված խումբը հարձակում գործեց ու գրավեց Երևանի ոստիկանության մի համալիր՝ պատանդ վերցնելով ոստիկանների: Հաջորդած երկշաբաթյա դիմակայության ընթացքում «Մասնա Ծոեր» խումբը վերցրեց նոր պատանդներ՝ ոստիկաններ ու բուժաշխատողներ, պահանջելով քաղաքական փոփոխություններ: Ըստ հնչող մեղադրանքների՝ խմբի անդամներն իրադարձությունների ժամանակ սպանեցին երեք ոստիկանի: Դիմակայության ընթացքում Երևանում և երկրի այլ վայրերում տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր ու հանրահավաքներ ի պաշտպանություն «Մասնա Ծոերի»: Իրավապահների կողմից եղան անօրինական ձերբակալումներ, խաղաղ ցուցարարների նկատմամբ անհամաչափ և չափից ավելի ուժի կիրառման դրսևորումներ, բռնություններ լրագրողների նկատմամբ և մարդու իրավունքների այլ լուրջ խախտումներ, հատկապես

հուլիսի 29-ի գիշերը, երբ ոստիկանությունը ցրեց «Մասնա Շոերի» քաղաքական պահանջները սատարող ցուցարարներին: Թեպետ ոստիկանությունը հեռացրել կամ կարգապահական միջոցներ է կիրառել ավելի քան մեկ տասնյակ ոստիկանների հանդեպ, այս քայլերը պատասխանատվության ենթարկելու համարժեք միջոցներ չէին լայնատարած չարաշահումների համար:

Տարվա ընթացքում մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներն էին՝ իրավապահների անպատժելիությունը, պաշտոնատար անձանց կողմից կառավարության ռեսուրսների օգտագործումն իշխող ՀՀԿ-ի քաղաքական գերիշխող դիրքը պահպանելու համար, ինչպես նաև երկրի էլիտայի կողմից տնտեսական ու քաղաքական իշխանության օգտագործումը՝ աջակիցներին հարստացնելու և իրավապահ ու դատական համակարգերը կոռումպացնելու համար և դատական համակարգի սահմանափակ անկախությունը:

Արձանագրված այլ խնդիրները ներառել են զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված կասկածելի մահվան դեպքերը, սպաների և ծառայակից զինվորների կողմից զորակոչիկների հանդեպ նվաստացումները և վատ վերաբերմունքը, հաղորդումները ձեռքակալությունների ու հարցաքննությունների ժամանակ ոստիկանության բռնի պահվածքի վերաբերյալ, դաժան ու գերբնակեցված բանտային պայմանները: Եղել են կամայական ձեռքակալություններ ու նախնական կալանքի երկարատև կիրառում՝ կալանքի պատճառների վերաբերյալ թափանցիկության բացակայության պայմաններում, ցուցմունքների հավաստիության նկատմամբ անվստահություն, ազատ արձակման ոչ հստակ չափորոշիչներ և կալանքի տակ գտնվողների իրավունքների ոչ հավասար կիրառում, օրինակ՝ ընտանիքի անդամների տեսակցության մասով: Դատաքննությունները հաճախ երկար են տևել և դատարանները չեն կարողացել ապահովել արդար դատաքննության իրավունքն ապահովող օրենքների կիրառումը: Խնդրահարույց էր մնում օրենքի ոչ համարժեք կիրառումը կապված անձի մասնավոր կյանքի իրավունքի ռոնահարումների և անօրինական խուզարկությունների հետ: Տպագիր ու հեռարձակող լրատվամիջոցներում բացակայել է քաղաքական կարծիքների բազմազանությունը, իսկ հեռուստաընկերությունների գերակշիռ մասն արտացոլել են իշխանությունների դիրքորոշումները: Խնդրահարույց էր ինքնագրաքննությունը: Ըստ հաղորդումների, քաղաքացիական բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանությունը թիրախավորում էր լրագրողներին: Կրթական հաստատությունների և ուսանողական գործունեության երկուստեք քաղաքականացումը խաթարել է ուսումնակրթական ազատությունը: Վատացել է հանրահավաքների ազատության նկատմամբ հարգանքը: Իշխանությունները սահմանափակել են քաղաքական գործընթացին մասնակցելու ազատությունը և քաղաքական բազմակարծությունը: Կառավարության կողմից սահմանափակումներն ազդել են որոշ փոքրամասնություն կազմող կրոնական խմբերի վրա և կրոնական փոքրամասնությունների անդամները ենթարկվել են խտրական վերաբերմունքի

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

հասարակության կողմից: Շարունակում էր խնդրահարույց մնալ ընտանեկան բռնությունը: Նորածինների սեռային հարաբերակցության անհավասարակշռությունը փաստում էր երեխայի սեռի կանխակալ ընտրության մասին: Լայնորեն տարածված էր խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ: Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձինք ենթարկվել են ոտնձգությունների և խտրականության պաշտոնական օղակների կողմից, ինչպես նաև եղել են բռնություններ ու խտրական վերաբերմունք հասարակության կողմից: Հասարակությունը խարանել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց: Կառավարությունը սահմանափակել է աշխատողների իրավունքները և թերի է կիրառել աշխատանքային օրենսդրությունը:

Իշխանությունները պաշտոնյաների կողմից թույլ տված չարաշահումների մասին հաղորդումների հիման վրա իրականացրել են սուկ մակերեսային քննություններ: Իրավապահները հաճախ անպատժելիորեն թույլ են տվել չարաշահումներ, երբեմն հենց ուղղակիորեն իրավապահ համակարգի ղեկավարների հրամանով: Իշխանությունները ոչ ոքի պատասխանատվության չեն ենթարկել 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած բախումների արդյունքում զոհված 10 անձանց մահվան համար:

## ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

### ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանությունները

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և ադրբեջանական յոթ այլ տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Ապրիլի 1-ից 5-ը տեղի ունեցավ բռնությունների ահազանացում շփման գծում ու հայ-ադրբեջանական միջազգային սահմանին: Ծանր բախումների արդյունքում գրանցված զոհերի թիվն ամենաբարձրն էր 1994 թ.-ի հրադադարի ստորագրումից ի վեր: Հնչեցին մեղադրանքներ մոլեգնող բռնությունների ընթացքում կողմերի թույլ տված վայրագությունների վերաբերյալ: Հակամարտության կողմերը բողոքներ են ներկայացրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ միմյանց մեղադրելով այս ժամանակահատվածում վայրագություններ թույլ տալու մեջ:

Ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերը շարունակել են մնալ խնդրահարույց: Ապրիլի 26-ին Հայաստանի քննչական կոմիտեն հաղորդում ներկայացրեց շարքային Հովհաննես Պետրոսյանի մահվան մասին, ում դիակը, գլխի հատվածում ստացված երկու հրազենային վնասվածքներով, գտել էին զինվորական բեռնատարի թափքում:

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Իրավասու մարմինները քրեական գործ հարուցեցին ինքնասպանության հասցնելու հատկանիշներով: Լրատվամիջոցներում տեղ գտած հարցազրույցների համաձայն Պետրոսյանի ընտանիքը չէր հավատում ինքնասպանության վարկածին և պնդում էր, որ նրա մահը պայմանավորված էր գորամասի սպաներից մեկի հետ ունեցած լարված հարաբերություններով, ում Պետրոսյանը, ըստ հաղորդումների, թույլ չէր տվել վառելիք գողանալ իրեն ամրակցված մեքենայից: Նոյեմբերի դրությամբ ձերբակալված կասկածյալներ չկային. տարեվերջի դրությամբ քննությունը ընթացքի մեջ էր:

Մարդու իրավունքների դիտորդները շարունակում էին պնդել, որ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան միջադեպերի դեպքում իշխանությունները ներկայացնում են դեպքերի հղկված տարբերակները և հետագա քննությունը կենտրոնացնում են այդ նախնական վարկածը հաստատելու վրա: Մարդու իրավունքներին առնչվող մի շարք մտահոգիչ հարցերի անդրադառնալով՝ Եվրախորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Նիլս Մուիթնիկսը մարտի 15-ի իր զեկույցում նշել էր, որ նա «սպառնում էր այդ գործերի քննության հանդեպ գոհերի ընտանիքների և քաղաքացիական հասարակության անվստահության բարձր մակարդակից»:

Հուլիս 17-ին «Մասնա Ծոեր» զինված խումբը գրավեց Երևանի ոստիկանության մի համալիր՝ պահանջելով քաղաքական փոփոխություններ: Հաջորդած երկշաբաթյա դիմակայության ընթացքում «Մասնա Ծոեր» խումբը մի քանի օրով ոստիկանների ու բժիշկների պատանդ վերցրեց և ըստ հնչող մեղադրանքների՝ խմբի անդամներն իրադարձությունների ժամանակ սպանեցին երեք ոստիկանի. մեկին հարձակման ժամանակ, մյուսին դիմակայության ընթացքում, իսկ երրորդը մահացավ հարձակման ժամանակ ստացած վնասվածքներից (տես՝ Մաս 1.գ., 2.գ. և 2.բ.):

Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) քննություն սկսեց քրեական օրենսգրքի շեքեր զավթելու ու ապօրինի զենք-զինամթերք ձեռք բերելու և գործածելու հողվածների հատկանիշներով: Պաշտոնական տեղեկատվության համաձայն ՀՔԾ մեղադրանք ներկայացրեց 62 հոգու (որոնցից 33-ը մասնակցել էին զինված հարձակմանը). հոկտեմբերի 25-ի դրությամբ 44 հոգի դեռևս գտնվում էին նախնական կալանքի տակի և գործով քննությունը դեռևս շարունակվում էր: Իրավասու մարմինների կողմից խմբի անդամներին նաև մեղադրանք ներկայացվեց առանձին հանցանքների համար, մասնավորապես՝ սպանության և պատանդ վերցնելու համար: Հարձակման ընթացքում ըստ հնչող մեղադրանքների «Մասնա Ծոերը» սպանել էին ոստիկանության գնդապետ Արթուր Վանոյանին, վնասվածքներ պատճառել մի քանիսին և պատանդ վերցրել մի քանի այլ ոստիկանների, ում բոլորին ազատ արձակեցին հուլիսի 23-ին: Վնասված ոստիկաններից մեկը՝ Գագիկ Մկրտչյանը հարձակման ընթացքում ստացած վնասվածքներից օգոստոսի 13-ին մահացավ: Մկրտչյանի սպանության գործով մեղադրանք ներկայացվեց «Մասնա Ծոերի» անդամ Արմեն Բիլյանին: Ըստ ոստիկանության, զինված խմբի անդամներից մեկի՝ Սմբատ

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Բարսեղյանի կրակոցից հուլիսի 30-ին մահացել է ոստիկան Յուրա Տեփանոսյանը: Բարսեղյանը և զինված խմբի մյուս անդամները հերքում են իրենց ներգրավվածությունը Տեփանոսյանի սպանության մեջ: Հուլիսի 27-30-ին խումբը պատանդ էր վերցրել բուժաշխատողների: Պատանդ պահելու ժամանակահատվածում պատանդառված ոստիկանների կամ բուժաշխատողների նկատմամբ ոստիկանության կամ բռնությունների մասին հաղորդումներ չեն եղել (տես նաև՝ Մաս 1.դ., 2.ա. և 2.բ.):

## **բ) Անհետացումներ**

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների, առևանգումների կամ հափշտակումների մասին հաղորդումներ չեն եղել:

## **գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ**

Օրենսդրությունն արգելում է նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչները շարունակել են կանոնավոր կերպով մասնակից լինել իրենց հսկողության ներքո գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումներին:

Ոստիկանության բռնությունները կասկածյալների նկատմամբ նրանց ձեռքադրության, բերման ենթարկելու կամ հարցաքննության ընթացքում շարունակում են մնալ որպես զգալի խնդիր: Ըստ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների (ՀԿ), հաշվեհարդարի վախից ելնելով, տուժողներն անօրինաչափ գործողությունների մասին խուսափում են հաղորդում տալ: Բռնությունների գերակշիռ մասը տեղի է ունենում ոստիկանական բաժանմունքներում, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձերբակալվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական դիտորդների կողմից: Ըստ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ), որն իրավասու մարմինների թույլտվությամբ ոստիկանության պահման վայրերում ստուգումներ անցկացնող ՀԿ-ների միավորում է, ոստիկանությունը ձերբակալությունն օգտագործում է ինքնին որպես պատիժ: Մարդու իրավունքների հարցերով Եվրախորհրդի հանձնակատարը 2015թ. մարտի իր զեկույցում մտահոգություն էր հայտնել «ոստիկանության և այլ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից խոշտանգումների և վատ վերաբերմունքի շարունակական հաղորդումների կապակցությամբ՝ հաճախ խոստովանություն կորզելու նկատառումներով և դրա հետ կապված անպատժելիության խնդրի» վերաբերյալ:

Հուլիսի 17-ի «Սասնա Շոերի» կողմից Էրեբունու ոստիկանական գնդի տարածքի գրավման հետ կապված քաղաքական բողոքի ակցիաների ժամանակ տեղական ՀԿ-ների կողմից,

ինչպիսիք են՝ Հայաստանի հելսինկյան կոմիտեն, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ը և Մարդու իրավունքների հելսինկյան սոցիալական, եղել են բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ հանրահավաքների մասնակիցների, լրագրողների, քաղաքացիական ու քաղաքական ակտիվիստների և շարքային քաղաքացիների հանդեպ ուժային կառույցների կողմից դաժան, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ (տես՝ Մաս 2.ա. և 2.բ.):

Հուլիսի 29-ին ոստիկանության կողմից անհամաչափ ուժ կիրառվեց ցուցարարների, ոչ-ցուցարարների (այդ թվում՝ անչափահասներ) և լրագրողների նկատմամբ Երևանի երկու վայրերում, որոնք գտնվում էին Էրեբունու գրավված գնդի տարածքի մոտակայքում: Մինչ Սարի թաղում բանակցություններ էին ընթանում ընդդիմադիր որոշ առաջնորդների և Երևան քաղաքի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանի միջև, Ոստիկանության ներքին գործերի ղեկավար Լևոն Երանոսյանը հրաման տվեց, որից հետո համազգեստով ոստիկանները նոնակներ նետեցին ամբոխի վրա՝ պատճառելով բազմաթիվ բեկորային վնասվածքներ, այրվածքներ ու գազային թունավորում: Միաժամանակ, զինված քաղաքացիական անձինք ինքնաշեն մահակներով գրոհեցին ցուցարարների ու դեպքերը լուսաբանող լրագրողների վրա՝ ցուցարարների համար չթողնելով տարածքից հեռանալու ուղի: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների և ցույցերի ընթացքին հետևողների, ոստիկանությունը թեպետ առաջնորդներին հայտնել էր, որ ամբոխը պետք է ցրվի, բայց բավարար ժամանակ չէին տվել հեռանալու համար: Դրա փոխարեն, ըստ բազմաթիվ մարդկանց վկայությունների, իրավապահները օղակի մեջ են վերցրել ցուցարարներին՝ նրանց պատժելու, վնասելու, կալանավորելու և այդ կերպ ցույցերին վերջ տալու ակնհայտ նպատակով: Բացի այդ, ցուցարարների ու լրագրողների վրա հարձակում էին գործել զինված քաղաքացիական անձինք, որոնցից մի քանիսին ավելի ուշ ճանաչեցին և պարզվեց, որ նրանք ոստիկանության պետի և այդ թաղամասի Ազգային ժողովի պատգամավորի անվտանգության անձնակազմի անդամներ են:

Ըստ պաշտոնական տեղեկատվության հուլիսի 17-ից հուլիսի 30-ը ոստիկանության կողմից բերման են ենթարկվել ավելի քան 700 անձ՝ կապված ոստիկանության և «Սասնա Շոեր» զինված խմբի միջև առճակատման ու ցույցերի հետ: Շատ դեպքերում մարդկանց բերման էին ենթարկել սոսկ որոշակի տեղում գտնվելու համար՝ անկախ ցույցին մասնակցել-չմասնակցելու հանգամանքից: Որոշ դեպքերում իրավաբան ունենալու նրանց իրավունքը չի հարգվել, նրանց պահել են այնպիսի վայրերում, որոնք նախատեսված չեն բերման ենթարկվածներին պահելու համար և պահել են օրենքով սահմանված երեք ժամից ավել՝ առանց մեղադրանք ներկայացնելու ու փաստաբան ունենալու հնարավորության: Որոշ դեպքերում բերման ենթարկվածների շարքում են եղել ակտիվիստների ընտանիքի անդամները. Երբ ակտիվիստները եկել են ոստիկանական բաժին, ըստ հաղորդումների, ոստիկանները նրանց հորդորել են դադարեցնել ցույցերը կամ ժամերով պահել են: Այս

Ժամանակահատվածում հրազենային վնասվածքների ու գազային թունավորման հետ կապված բուժօգնության են դիմել 51 ոստիկան:

Հուլիսյան դեպքերից հետո ոստիկանությունն անհամաչափ ուժի կիրառման համար համակարգից հեռացրեց 5 ոստիկանի, իսկ Սարի թաղի դեպքերի ժամանակ ցուցարարների ու լրագրողների դեմ հարձակումը չկանխելու համար կարգապահական տույժեր կիրառեց 13 ոստիկանի նկատմամբ: Ավելի ուշ, 4 ոստիկանական պաշտոնյաներ, այդ թվում՝ Երևան քաղաքի ոստիկանության պետ Աշոտ Կարապետյանը, ազատվեցին զբաղեցրած պաշտոններից: Այս դեպքերի ժամանակ պաշտոնեական չարաշահումների մեղադրանքով ՀՔԾ-ի կողմից հարուցված քրեական գործով քննությունը տարեվերջի դրությամբ դեռևս շարունակվում էր:

Օգոստոսի 12-ին Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիա ՀԿ-ը հրապարակեց ոստիկանության բռնություններից տուժածների ցուցմունքները: Օրինակ՝ Արսեն Թադևոսյանը, պատմում էր հուլիս 20-ի գիշերն իրեն բերման ենթարկելու մասին, երբ ոստիկանության բռնությունների արդյունքում կոտրվել էր նրա ծնոտը, հասցվել էին նաև այլ վնասվածքներ, իսկ ոստիկանության Շենգավիթի բաժանմունքում հրաժարվել էին բուժօգնություն ապահովել: ՀՔԾ-ի կողմից քաղաքացիների նկատմամբ ոստիկանության բռնությունները հետաքննող գործի շրջանակում նա ճանաչվել է որպես տուժող:

Օգոստոսի 18-ին մեկ այլ ՀԿ-ը՝ Հելսինկյան կոմիտեն հրապարակեց մի ծավալուն զեկույց, որտեղ նկարագրված էր հուլիսի 17-ից հետո տեղի ունեցած մի հանրահավաքից հետո բերման ենթարկվածների իրավիճակը: Օրինակ՝ մասնակիցներից մեկը նշել էր, որ ոստիկաններն իրեն ու հանրահավաքի առնվազն 50 այլ մասնակիցների տարել են Ոստիկանության ակադեմիայի մարզասրահ և ստիպել, որ նրանք անցնեն ոստիկանների երկու շարքի արանքով, ովքեր իրենց ծեծի էին ենթարկում: Այնտեղ գտնվելու ընթացքում աստրճանակով զինված ոստիկաններ պարբերաբար սպառնում էին նրանց, թույլ չէին տալիս ջուր խմել ու բնական կարիքները հոգալ և խոսել մյուս բերման ենթարկվածների հետ: Ամբողջ ընթացքում նրանք ձեռնաշղթաներով էին: Նրանք, ովքեր չէին հնազանդվում և փորձում էին շարժվել կամ խոսել մյուսների հետ, տեղափոխվում էին այլ սենյակ, ծեծի ենթարկվում, ապա կրկին վերադարձվում մարզասրահ: Հուլիսի 18-ին, ըստ հաղորդումների, բերման ենթարկելիս դաժան ծեծի էին ենթարկվել ակտիվիստներ Անդրանիկ Ասլանյանը, Դավիթ Սանասարյանը և Արթուր Մինասյանը: Ոստիկանությունը շարունակում էր ոտքերով հարվածել նրանց ոստիկանության զինվորական բաժին տեղափոխելու ընթացքում, որտեղ նրանց նկատմամբ բռնությունները շարունակվել են: Սանասարյանի գլխին այնքան են ոտքով հարվածել, որ նա կորցրել է գիտակցությունը, իսկ ավելի ուշ նրա մոտ ախտորոշվել է ուղեղի ցնցում:

Թեպետ զինված ուժերում տեղ գտնող բռնությունների ծավալների մասին հուսալի վիճակագրություն չկա, սակայն կենցաղային վատ պայմանները, կոռուպցիան և

հրամանատարների հաշվետվողականության բացակայությունը շարունակել են ծառայակիցների ու վերադասի կողմից զինվորների հանդեպ վատ վերաբերմունքի դրսևորման և վնասվածքների պատճառ հանդիսանալ: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների «քրեական արժեհամակարգի» վրա հիմնված ենթամշակույթը խաթարում էր զինվորական կարգապահությունը և հանգեցնում «տղամարդավայել պահվածքի» սկզբունքին, որի ներքո մերժվում են կանոնակարգային նորմերը: Ըստ Պաշտպանության նախարարության այս ենթամշակույթը հանգեցրել է նրան, որ զինվորները չեն զեկուցում քրեածին պահվածքի ու բռնությունների բոլոր դեպքերի մասին: Թեպետ զինվորական ղեկավարությունը ընդունում է խնդրի առկայությունն ու ձգտում հաղթահարել այն, որոշ դիտորդներ փաստում էին, որ որոշ զինվորական հրամանատարներ դա, ինչպես նաև նորակոչիկների նկատմամբ բռնությունները, համարում են կարգապահություն ապահովելու արդյունավետ միջոց:

Շելսինկյան կոմիտեն 2015թ. իր զեկույցում, հիմնվելով 38 նախկին զինվորականների հետ ունեցած հարցազրույցների վրա, փաստում էր, որ ռազմական ոստիկանությունն իրենց մոտ հայտնված զինվորների նկատմամբ կիրառել են ֆիզիկական և այլ բռնություններ, այդ թվում՝ ծեծ, հարվածներ ոտքով, բռունցքով, ռետինե մահակով, դրսևորել են նվաստացուցիչ վերաբերմունք: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ շատ զորամասեր վերահսկում են կոռումպացված պաշտոնյաները, իսկ տարվա ընթացքում լրատվամիջոցներում եղել են հրապարակումներ այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք, ովքեր նման խնդիրների դեպքում պետք է համարվեին զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

### **Բանտերի ու կալանավայրերի պայմանները**

Բանտային պայմանները բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժապասարկմամբ և կոռուպցիայով. շարունակում էր խնդրահարույց մնալ որոշ քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը և որոշ դեպքերում պայմանները խիստ ծանր էին և կյանքի համար վտանգավոր: Քրեակատարողական հիմնարկներում, ընդհանուր առմամբ չեն եղել հարմարություններ հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար:

Ֆիզիկական պայմաններ. Գերբնակեցվածությունն ամենալուրջ խնդիրն էր որոշ քրեակատարողական հիմնարկների, հատկապես՝ Նուբարաշենի համար, որն ամենամեծ քրեակատարողական հիմնարկն է:

Ըստ պաշտոնական տվյալների տարվա առաջին 10-ն ամիսների ընթացքում մահացել է 24 բանտարկյալ, որից 17-ը հիվանդության պատճառով, իսկ 7-ը՝ ինքնասպանության: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների՝ մահացության ցուցանիշը շենքերի անբավարար



ֆիզիկական պայմաններից զատ պայմանավորված է նաև բանտային կյանքում գերակայող կազմակերպված քրեական կառուցակարգի առկայությամբ, բանտարկյալների միջև տիրող աստիճանակարգային հարաբերություններով և բանտարկյալների բուժօգնության հարցում դրսևորվող անփութությամբ: Մարդու իրավունքների դիտորդները նաև նշում են, որ մահվան այս դեպքերով պատշաճ քննություն չի իրականացվել:

Մարտի 1-ին հաղորդում եղավ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի բանտարկյալ Մխիթար Սարգսյանի ինքնասպանության վերաբերյալ: Սարգսյանի կինը՝ Սաթենիկ Հովսեփյանը կարծում էր, որ իր ամուսինը սպանվել է իր խցակից ու քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի նկատմամբ բռնությունների պատասխանատվությունն իր վրա չվերցնելու համար: Օգոստոսի 17-ին տուժողի ընտանիքը ներկայացնող Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի մասնաճյուղ (ՀՔԱՎ) ՀԿ-ը փաստում էր, որ ՀՔԾ-ի կողմից Սարգսյանի մահվան գործով քննությունը կասեցվել է, քանի որ հնարավոր չի եղել գտնել նրան ինքնասպանության դրդած անձանց: Ըստ ՀՔԱՎ ղեկավարի՝ քննությամբ բավարար մանրակրկիտ կերպով չի հիմնավորվում այն փաստը, որ տեղի է ունեցել ինքնասպանություն և ոչ սպանություն:

Տարվա ընթացքում Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների ՀԿ-ի կողմից Աբովյանի քրեակատարողական հիմնարկի պայմանների վերաբերյալ ներկայացված զեկույցում նշվում էր, որ կին բանտարկյալների համար ապահովված չեն գեղեցիկ առանձնահատուկ պայմաններ, ինչպիսիք են պատշաճ բուժօգնությունը, սանիտարահիգիենիկ պայմանները, սնունդը և հոգեբանական ծառայությունները: Այլ խնդիրների շարքում հիշատակվում էին ոչ ուտելի սնունդը, սանհանգույցների ու ցնցուղարանների անբավարար քանակությունը, հոսող ջրի սահմանափակ հասանելիությունը, անբավարար ջեռուցումը ձմռան ամիսներին, վատ օդափոխությունը, բուժծառայությունների, դեղամիջոցների և մարմնամարզական հարմարությունների անհասանելիությունը և զբաղվածության սահմանափակ հնարավորությունները:

Այն նույն խնդիրներն առկա են մնացած քրեակատարողական հիմնարկների մեծ մասում: Բանտային պայմանների հասարակական մշտադիտարկման խումբը (ՀՄԽ) նկատում էր, որ բուժանձնակազմը չունեի ինքնուրույն գործելու իրավասություն և բանտարկյալին հիվանդանոց տեղափոխելու, բանտարկյալի գործում ֆիզիկական վնասվածքի մասին գրառում կատարելու կամ այլ նմանատիպ քայլերի համար պետք է ստանար վարչական թույլտվություն: Եղել է առնվազն մեկ լրատվական հաղորդում այն մասին, որ բանտարկյալը մահացել է բժշկական անուշադրության պատճառով:

Ըստ ՀՄԽ-ի և իրավապաշտպան ակտիվիստների՝ բանտերում ամենավատ պայմաններում գտնվում են ԼԳԲՏԻ անձինք: Նրանք հաճախ խտրականության, բռնության, սեռական բռնության թիրախ են դառնում, և մյուս բանտարկյալները նրանց ստիպում են կատարել արժանապատվությունը նվաստացնող աշխատանք: Քրեակատարողական հիմնարկների

ղեկավարությունը սատարում և թույլատրում էր նման վերաբերմունքը և նրանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները սուսկալի են: ՀՄԽ-ի 2014թ. զեկույցի համաձայն ֆիզիկական բռնություններն ու նվաստացնող վերաբերմունքը ընդունված երևույթ են, իսկ մենախցերի կիրառումն ու մահակներով ծեծն ամենաընդունված պատժամիջոցներն են: ՀՄԽ-ը փաստում էր, որ նույնասեռական տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, պահվում են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են կատարել նվաստացնող աշխատանք ու մատուցել սեռական ծառայություններ:

Վարչաքարտություն. Իշխանությունները չեն կատարել վստահելի քննություններ, և չեն ձեռնարկել քայլեր իմաստալի լուծումներ տալու բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի, բանտարկյալների միջև հարաբերությունների ու համատարած կոռուպցիայի խնդիրներին: Տեղեկություններ չեն եղել քրեակատարողական հիմնարկների վարչակազմի ընդհանուր գործավարության համարժեքության վերաբերյալ: Շարունակում էր մտահոգիչ մնալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու առողջական վիճակով պայմանավորված վաղաժամկետ ազատելու համակարգը՝ օրենսդրության ու իրականացման ասպարեզում առկա համակարգային բացերի հետևանքով: Դատապարտյալներն ու կալանքի տակ գտնվողները միշտ չէ, որ ապահովվում էին տեսակցությունների ողջամիտ հնարավորություններով՝ տեսակցության համար հարմար տարածքների բացակայության հետևանքով: Բանտերի ու կալանավայրերի ղեկավարներն իրենց հայեցողությամբ կամայականորեն կարող էին բանտարկյալներին ու կալանքի տակ գտնվողներին մերժել տեսակցությունները, ընտանիքի հետ կապ հաստատելու ու պարբերականներ ստանալու հնարավորությունները:

Բանտերը չունեին օմբուդսմեն, իսկ բանտարկյալների համար չկային արդյունավետ մեխանիզմներ հաղորդելու անազատության պայմանների հետ կապված խնդիրների մասին: Իրավասու մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին իշխանություններին ներկայացնել անմարդկային պայմանների մասին արժանահավատ բողոքներ առանց գրաքննության:

Անկախ մշտադիտարկում. Իրավասու մարմիններն, ընդհանուր առմամբ թույլատրել են տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեին, իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մշտադիտարկում, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Նրանց ներկայացուցիչները կարող էին առանձնագրույցներ ունենալ բանտարկյալների հետ: Իրավասու մարմինները թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

Քրեակատարողական մարմինները ՀՄԽ-ի դիտորդներին մինչև ղեկտեմբեր թույլ չէին տալիս այցելել «Մասնա Ծռեր» խմբի կալանավորված անդամներին (տես՝ Մաս 1.դ. և Մաս 2.բ.):

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

## **դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում**

Թեպետ օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը, ոստիկանները հաճախ կամայականորեն բերման են ենթարկել քաղաքացիներին, այդ թվում՝ ցույցերի մասնակիցներին:

## **Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը**

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: ՀՔԾ-ն առանձին կառույց է, որն իրականացնում է նախաքննություն պետական պաշտոնյաների հնարավոր չարաշահումների հետ կապված քրեական գործերով: Քննչական կոմիտեն պատասխանատու է քրեական գործերով մինչդատական քննությունների համար և քննչական ծառայությունների իրականացման համար: Այս բոլոր կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են երկրի նախագահի կողմից:

Անպատժելիությունը խնդրահարույց էր և չկար անկախ կառույց, որը կգրադվեր բացառապես ոստիկանական չարաշահումների քննությամբ: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների՝ իրավապահներն իրենց դերը տեսնում են իշխանությանը պաշտպանելու, և ոչ իրավունքին ու հանրությանը ծառայելու մեջ: Եղել են անպատժելիության մասին հաղորդումներ կապված ոստիկանության կողմից «Մասնա Ծոերի» քաղաքական պահանջները պաշտպանող զանգվածային ցույցերի ընթացքում ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման հետ (տես՝ Մաս 1.գ.):

Պաշտպանության նախարարությունը ջանքեր է գործադրել կարգապահության բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ կանոնակարգերի գործադրումն ապահովելու համար վարչական կարգապահական տույժերի փոխարեն կիրառել է քաղաքացիական իրավական համակարգը, ապահովել է սպաների ուսուցում մարդու իրավունքների հարցերի շուրջ և սոցիալական, հոգեբանական և իրավական ուսուցում կապված զինվորական ծառայության հետ: 2015թ. նոյեմբերին Պաշտպանության նախարարությունը հիմնեց Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքները, ամրապնդել բարեվարքությունը, խթանել էթիկան, իրականացնել հակակոռուպցիոն քաղաքականություն և կատարել կառավարման փոփոխություններ, ինչպես նաև ապահովել համակարգում միջազգային կազմակերպությունների հետ:

## **Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում**

Չնայած օրենքով իրավապահներից պահանջվում է կարգադրագիր ձեռք բերել և ողջամիտ կասկած ունենալ ձերբակալության դեպքում, իրավասու մարմինները ժամանակ առ

Ժամանակ կասկածյալներին ձերբակալել են առանց կարգադրագրի և առանց ողջամիտ կասկածի: Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժել ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը կամ քննության առել ոստիկանության պահվածքը ձերբակալությունն իրականացնելիս: ՀԴԽ-ի զեկույցի համաձայն՝ ոստիկանությունը ճշգրիտ գրառումներ չի վարել և բերման ենթարկելու կամ ձերբակալելու մասին արձանագրությունները կամ հետին ամսաթվով է թվագրել կամ չի լրացրել:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գրավով ազատ արձակելու տարբերակ սահմանված է, սակայն դատավորներն այն հազվադեպ ու ընտրովի մոտեցմամբ են կիրառում: Գործնականում դատական համակարգը և իրավապահ կառույցները խափանման միջոցը որոշելիս ապացուցման բեռը դնում են կասկածյալների վրա, և նրանք պետք է ի ցույց դնեն, որ փախուստի ռիսկ չկա և իրենք որևէ այլ կերպ չեն խոչընդոտի քննությանը:

Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած իրավունք ունեն ունենալ փաստաբան: Անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ ՀԴԽ-ի կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը հաճախ խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռնող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձերբակալելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ և ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան ունենալու նրանց իրավունքը:

Կամայական ձերբակալություն. Ըստ միջազգային կազմակերպությունների ու իրավապաշտպան դիտորդների՝ ոստիկանությունը, ԱԱԾ անձնակազմն ու սահմանապահները հաճախ արգելանքի տակ են վերցրել կամ ձերբակալել են մարդկանց՝ առանց կարգադրագրի: Իրավապաշտպան կազմակերպությունները նշում էին, որ ձերբակալությունները հաճախ եղել են քննություն սկսելու նպատակով, հաճախ այն ակնկալիքով, որ կասկածյալը կխոստովանի և կվերանա հետագա քննության անհրաժեշտությունը:

Ըստ Քաղաքացիական համերաշխության հարթակի հուլիսի 28-ից օգոստոսի 1-ն անցկացված փաստահավաք առաքելության նախնական տվյալների եղել են դեպքեր, երբ քաղաքացիական հագուստով ոստիկանները բռնել են ցուցարարներին ու տեղափոխել ոստիկանական բաժանմունք: Ձեկույցում մեջբերված էր Արա Պետրոսյանի ցուցմունքը, ով քայլելիս է եղել առճակատման վայրին հարող տարածքում, երբ առանց որևէ տարբերակիչ նշանների մեքենա է մոտեցել նրան, ապա այնտեղից դուրս են եկել քաղաքացիական հագուստով չորս ոստիկաններ և առանց բացատրության նրան ստիպել նստել մեքենան, ծեծի ենթարկել, ապա տեղափոխել Ոստիկանության Էրեբունու բաժին: Ոստիկանությունը նրան մի քանի ժամից ազատ էր արձակել:

Նախնական կալանքի տակ գտնվողներ. Նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ հոկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 9.6 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները, և ևս 22.7 տոկոս եղել են կալանավորված անձիք, որոնց դատաքննությունը եղել է ընթացքի մեջ կամ որոնք սպասել են դատավճիռն ուժի մեջ մտնելուն: Որոշ դիտորդներ համարում են, որ ոստիկանությունը չափից շատ է օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց: Հոկտեմբերի 20-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռեց, որ երկիրը խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ հայցվորին կալանավորելիս չապահովելով համապատասխան ու բավարար հիմնավորումներ: ՄԻԵԴ-ի վճռում նշվում էր, որ նախնական կալանքի կիրառման ու երկարաձգման կարծրատիպային ձևակերպումները երկրում կարծես հանդիսանում են կրկնվող խնդիր:

Կալանքի չարաշահումն առկա է եղել նաև անչափահասների դեպքում: Ըստ Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի քրեական արդարադատության համակարգում անչափահասներն առավել խոցելի էին ու պաշտպանված չէին իրենց իրավունքների ոտնահարումներից:

Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է, ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ լուրջ գործերի պարագայում: Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ տևողության» մասին: Դատախազները հաճախակի դատավորներին ներկայացրել են դատաքննությանը պատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ ունենալու հիմքով դատը

հետաձգելու միջնորդություններ, որոնք բավարարվում են: Դատախազները դատական լսումների ձգձգման համար պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքնությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ:

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինաչափությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Ըստ իրավական փորձագետների կասկածյալները չեն ունեցել իրական հնարավորություն իրենց ձեռքակալության օրինականությունը բողոքարկելու համար: Այն դեպքերում, երբ մեկ դատարան արդեն վճիռ է կայացրել նախնական կալանքի վերաբերյալ, անհավանական էր, որ մեկ այլ դատարան հարցականի տակ դներ այդ որոշումը:

### **ե) Արդար հրապարակային դատաքնության իրավունքի մերժում**

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ իրական անկախություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: Այնուհանդերձ, վարչական դատարաններն համեմատաբար ավելի անկախ են, քան մյուսները: Եղել են հաղորդումներ, որ Վճռաբեկ դատարանը ստորին աստիճանի դատավորներին թելադրել է բոլոր նշանակալի գործերի ելքերը: Ըստ դիտորդների Վճռաբեկ դատարանի վերահսկողությունը դատավճիռների նկատմամբ շարունակում էր մնալ որպես դատական անկախության վրա ազդող համապարփակ խնդիր:

Հանրային գերակա շահ ճանաչված տարածքում գտնվող գույքին առնչվող գործով ՄԻԵԴ-ի հոկտեմբերի 27-ի վճռում Վճռաբեկ դատարանի նախագահի պահվածքը նկարագրելիս նշվում է, որ «բացակայում էր դատական չեզոքության սկզբունքի համաձայն պահանջվող անկողմնակալությունը», ապա շարունակում, որ «դա օբյեկտիվ ու հիմնավոր վախ է ծնում, որ հայցվորի գործով որոշում կայացնելիս նա չի եղել անկողմնապահ»:

Դատավորները շարունակում էին ենթարկվել քաղաքական ճնշումների գործադիր բոլոր օղակների, հատկապես՝ իրավապահ կառույցների կողմից, ինչպես նաև դատական աստիճանակարգի շրջանակում: Քանի որ նրանց նշանակումը ցմահ չէ, նրանք խոցելի էին պաշտոնանկ արվելու առումով և չունեին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, եթե գործադիր, օրենսդիր կամ վերադաս դատական պաշտոնյաները որոշեին նրանց պատժել:

Իրավական փորձագետների համաձայն՝ այն պրակտիկան, երբ դատարանները պարտավորված են զգում բավարարել նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու քննիչների ներկայացրած միջնորդությունները, խաթարում է դատական անկախությունն ու նպաստում այն տպավորության ձևավորմանը, որ դատարանները սուսկ միջոց են, իսկ կալանքի տևողության հարցն իրականում որոշում են քննիչները: Ըստ

իրավաբանների՝ նախկինում որոշ դատավորների հեռացման դեպքերն անկախ որոշումների կայացման համար դեռևս շարունակում է սթափեցնող ազդեցություն ունենալ ողջ դատական համակարգի վրա:

2015թ. մարտի իր զեկույցում Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարն անդրադառնալով իրավապաշտպանների հնչեցրած մտահոգություններին, նշեց, որ իշխանությունները դատավորների դեմ անարդարացիորեն կիրառել են կարգապահական միջոցներ՝ ներագդելու նրանց որոշումների վրա կամ նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար: Նա նաև նկատեց արդարադատության նախարարի ներգրավումը դատավորների դեմ կարգապահական վարույթների գործընթացում՝ որպես մի պրակտիկա, որն անհամատեղելի է դատական անկախության հետ:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են դատական որոշումներին:

Դատաքննությունները սովորաբար բավարարել են ընթացակարգային ստանդարտներին, սակայն դրանք հաճախ, ըստ էության, անարդարացի են եղել, քանի որ շատ դատավորներ իրենց հարկադրված են զգում աշխատել դատախազների հետ՝ հասնելու դատապարտման:

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով: 2015թ. մարտի իր զեկույցում Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը լուրջ մտահոգություն հայտնեց այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվում են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դառնում:

Իրավապաշտպան ՀԿ-ները ներկայացրել են ցմահ բանտարկության դատապարտվածների նկատմամբ թույլ տրված մարդու իրավունքների խախտումները: Ըստ այս ՀԿ-ների՝ նման պատժի դատապարտվածներին հնարավորություն չի տրվել, որպեսզի իրենց գործերը դատական կարգով ըստ էության վերանայվեն, այն դեպքերում, երբ քրեական օրենսդրության մեջ եղել են փոփոխություններ, որոնք կփոխեին նրանց ցմահ բանտարկությունն ավելի մեղմ պատժով: Ըստ իրավապաշտպան խմբերի՝ ցմահ դատապարտվածների մասով արդարադատության ապահովման հարցում ամենամեծ խոչընդոտներից էր այն, որ դատարանի կարգադրությամբ գործի նյութերն ու իրեղեն ապացույցները ոչնչացվում էին: Սա դատապարտյալներին զրկել է տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող քրեափորձաքննությունների, օրինակ՝ ԴՆԹ փորձաքննության հիման վրա իրենց գործը վերանայելու հնարավորությունից:

## Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի ունեցել անկախություն այս իրավունքն իրացնելու համար:

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել: Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները, և օրենքով սահմանված է, որ ոչ-հայախոս ամբաստանյալների համար ապահովվում է անվճար թարգմանություն՝ ըստ անհրաժեշտության:

Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լուսմները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին փաստաբան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Փաստաբանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Օրենքը սահմանափակում է պաշտպանության պատրաստվելու համար ամբաստանյալի իրավունքն ու ժամանակը մինչդատական փուլում՝ մեղադրյալի ու նրա պաշտպանի համար քննությամբ ձեռք բերված նյութերը հասանելի դարձնելով միայն քննության ավարտին: Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատաբանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել կանչել պաշտպանության վկաներին: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ



թվում և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել:

Մարդու իրավունքների հարցերով զբաղվող փաստաբանները մտահոգություն էին հայտնել 2015թ. սահմանադրական փոփոխություններով ընդունված այն դրույթի վերաբերյալ, որով արգելվում է դատարաններում օգտագործել այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել միայն հիմնարար իրավունքների խախտմամբ: Մինչ այդ փոփոխությունը, Սահմանադրությամբ ավելի լայն արգելք էր կիրառվում և ցանկացած օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները չէին ընդունվում:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները բողոքարկման իրավունք ունեն և հաճախ իրացնում են այդ իրավունքը:

Ակնկալվել է, որ դատավորներն ամբաստանյալին ցանկացած պարագայում մեղավոր են ճանաչելու, և դատարան ուղարկված քրեական գործերի գերակշիռ մեծամասնությունն ավարտվել է դատապարտմամբ: Ըստ դատական վիճակագրության տարվա առաջին 10-ն ամիսների ընթացքում արդարացման դատավճիռները կազմել են շուրջ 4 տոկոս:

Ապրիլի 15-ին, արդարացման սակավաթիվ գործերից մեկով ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նարինե Հովակիմյանն արդարացման դատավճիռ կայացրեց ու դատարանի դահլիճից ազատ արձակեց Կարեն Կունգուրցևին, ով դատաքննությունից հետո ավելի քան 2.5 տարի գտնվում էր անազատության մեջ՝ սպասելով դատավճռի կայացմանը սպանության փորձի մեղադրանքով: Տուժողի ընտանիքը պաշտպանում էր Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է ԱԱԾ-ի պաշտոնյայի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներագդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղսագրվել է Կունգուրցևին: Մեղադրող կողմը բողոքարկել է արդարացման դատավճիռը և նոյեմբերի 28-ի դրությամբ բողոքարկման հետ կապված լսումները դեռ ընթացքի մեջ էին:

### **Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ**

Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների և քաղաքական ընդդիմության երկրում եղել են քաղաքական բանտարկյալներ ու կալանավորներ:

Իրավապաշտպան կազմակերպությունները «Նոր Հայաստան» քաղաքական շարժման անդամ Գևորգ Սաֆարյանին համարում էին քաղաքական կալանավոր: Հունվարի 1-ին իշխանությունները ձերբակալեցին նրան Երևանի ազատության հրապարակում տոնածառ տեղադրելու փորձ կատարելու ժամանակ ակտիվիստների, որոնց թվում էր նաև Սաֆարյանը, և ոստիկանության միջև տեղ ունեցած քաշքշուկից հետո: Սաֆարյանը, ով պնդում էր, որ ինքն ու մյուսները տուժել են ոստիկանության բռնի գործողությունների հետևանքով, ձերբակալվեց ոստիկանությանը բռնանալու համար և դատապարտման

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարություն, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

դեպքում նրան կարող է սպասել առավելագույնը՝ 5 տարվա ազատազրկում: Նոյեմբերի 28-ի դրությամբ դատավարությունը շարունակվում էր, իսկ վկաների կողմից ներկայացվում էին միմյանց հակասող ցուցմունքներ:

Իրավապաշտպան ՀԿ-ներն ի թիվս այլոց քաղաքական կալանավոր էին համարում նաև այն անձանցից շատերին, ում քրեական մեղադրանք էր ներկայացվել հուլիսի 17-30-ի դեպքերի հետ կապված՝ բացառությամբ ոստիկանության տարածքը գրաված զինված խմբի անդամների: Օրինակ՝ հուլիսի 29-ին և 30-ին ոստիկանությունը կալանավորեց «Ժառանգություն» կուսակցության երեք անդամների (Արմեն Մարտիրոսյան, Հովսեփ Խուրշուդյան և Դավիթ Սանասարյան) և քաղաքական ակտիվիստներ Անդրեաս Ղուկասյանին և Դավիթ Հովհաննիսյանին՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեղադրանքով: Իշխանությունները պնդում էին, որ քաղաքական գործիչները հրահրում էին բռնություններ և առաջնորդում էին ամբոխին դեպի ոստիկանության գնդի գրավված տարածք՝ միանալու զինված խմբի անդամներին, չնայած ըստ հաղորդումների այս մեղադրանքները չեն հիմնավորվել: Օգոստոսի 17-ին, 19-ին և 24-ին երեք տարբեր դատարաններ գրավի դիմաց ազատ արձակեցին Մարտիրոսյանին, Սանասարյանին և Խուրշուդյանին. Հովհաննիսյանն ու Ղուկասյանը նոյեմբերի 28-ի դրությամբ դեռևս գտնվում էին անազատության մեջ: Նոյեմբերի 14-ին գլխավոր դատախազությունը հայտարարեց, որ հուլիսի 29-ին զանգվածային անկարգություններ կազմակերպելու վերաբերյալ գործը կմիացվի «Սասնա Շռեր» խմբի դեմ հարուցված գործին ու մեղադրանքներ կներկայացվեն:

Ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանը, ով մինչ իր ձերբակալությունը (2014թ.), ակտիվորեն մասնակցում էր ազատամարտիկների սոցիալական պաշտպանության բարելավման հարցերով բողոքի ակցիաներին, տարեվերջի դրությամբ շարունակում էր կրել իր պատիժը (6 տարվա ազատազրկում խարդախության համար): Նա պնդում էր, որ անմեղ է և նշում էր, որ իշխանությունների թիրախում է հայտնվել այն բանից հետո, երբ մերժել է քաղաքացիական ակտիվություն չցուցաբերելու համար իրեն առաջարկված կաշառքները:

### **Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ**

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակ, ինչպես նաև հնարավորություն ունեն վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում: Սահմանադրական դատարանը տասնյակ գործերով որոշումներ է կայացրել օրենքների

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

սահմանադրականության վերաբերյալ, սակայն ստորին ատյանի դատարանները, որոնց վերադաս կառույցը Վճռաբեկ դատարանն է, և ոչ թե Մահմանադրական դատարանը, այդ որոշումներն իրականացրել են անհամաչափ կերպով:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով, սակայն ՄԻԵԴ-ի կողմից որոշումների կայացումից հետո այդ գործերով բովանդակային վերանայում չի կատարվում: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

**զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ**

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն, ընդհանուր առմամբ, հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն փաստաբանները պնդում են, որ դատավորները հաճախ գաղտնալսման, նամակագրությանը հետևելու ու խուզարկության թույլտվությունները շնորհելիս չեն պահանջում ներկայացնել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով, ընդհանուր առմամբ սահմանված իրավական ընթացակարգը դարձնելով սուկ ձևականություն: Ըստ հաղորդումների իշխանություններն իրականացրել են հեռախոսագրույցների գաղտնալսում, էլեկտրոնային փոստի և թվային հաղորդակցության այլ միջոցների վերահսկողություն այն անհատների նկատմամբ, ում կառավարությունը ցանկացել է պահել հսկողության տակ, այդ թվում՝ իրավապաշտպան ակտիվիստների և քաղաքական գործիչների նկատմամբ:

## ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

### ա) Խոսքի և մամուլի ազատություն

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն կառավարության հարգանքն այս իրավունքների նկատմամբ անհամաչափ է եղել: Տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցներն, ընդհանուր առմամբ, արտահայտել են կարծիքներ, որոնք հաճո են իրենց սեփականատերերի կամ գովազդատուների համար, որոնք պետական պաշտոնյաներ կամ օլիգարխներ են: Եղել են բռնության մի քանի դեպքեր լրագրողների նկատմամբ՝ կապված տարվա ընթացքում խաղաղ բողոքի ակցիաների լուսաբանման հետ:

Խոսքի և արտահայտվելու ազատություն. Թեպետ մարդկանց մեծ մասը կարողացել է քննադատել կառավարությանը հրապարակավ և մասնավոր կերպով, և քննարկել ընդհանուր հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերը՝ առանց վախենալու հաշվեհարդարից, լրատվամիջոցների ներկայացուցիչները հաճախ ինքնագրաքննություն են կատարել՝ պաշտոնական հալածանքներից խուսափելու համար:

Օգոստոսի 7-ին medialab.am անկախ լրատվական հարթակը, այն բանից հետո, երբ Երևանյան տարբեր ցուցասրահներ հրաժարվեցին նրանց ծաղրանկարների ցուցադրության համար վարձակալությամբ տարածք տրամադրել, կազմակերպեց բացօթյա ցուցահանդես: Ցուցադրության գիշերը medialab-ի տնօրեն Մարիաննա Գրիգորյանի մեքենայից գողություն կատարվեց. գողացել էին բոլոր պաստառներն ու շապիկները, որոնք ցուցադրվելու էին առաջիկա շաբաթվա ընթացքում: Սեպտեմբերի 30-ին Ոստիկանությունը կասեցրեց այդ գործով քննությունը՝ մեղավորներին չգտնելու հիմքով:

Մամուլի ու լրատվամիջոցների ազատություն. Տպագիր և հեռարձակող լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, չեն ապահովել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լուսաբանում:

Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր անձանց կամ խմբերի են պատկանում, և տպագիր լրատվամիջոցները, որոնց շրջանառությունը սահմանափակ է, հակված են եղել արտացոլել իրենց սեփականատերերի կամ ֆինանսական հովանավորների քաղաքական դիրքորոշումները, որոնք էլ իրենց հերթին հաճախ իշխանական օղակներին մոտ կանգնած անձինք են: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր բնակչության մեծ մասի համար: Հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը պատկանում էին իշխանական կուսակցության քաղաքական գործիչներին կամ քաղաքական կապեր ունեցող գործարարներին և ներկայացնում էին դեպքերի միակողմանի լուսաբանում: Քաղաքական տեսանկյունից զգայուն թեմաների շուրջ լրատվամիջոցները գերազանցապես

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

ներկայացրել են միայն կառավարության կողմից պաշտպանվող դիրքորոշումներն ու վերլուծությունները:

Սակավաթիվ անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց հարթակում, ինքնաբավ չէին ու իրենց գոյությունը պահպանում էին միջազգային ֆինանսավորման հաշվին: Տարվա ընթացքում ամերիկահայ բարերարի կողմից հատկացվող միջոցները սպառելուց հետո փակվեց նման լրատվամիջոցներից մեկը՝ Armenia Now-ն, որը լրատվական փորձագետների ու հասարակության կողմից համարվում էր արհեստավարժ ու անկողմնակալ լուսաբանում ապահովող լրատվամիջոց: Ըստ լրատվական փորձագետների՝ նույնիսկ մշտական ընթերցողների առկայությունը բավարար չէր, որպեսզի լրատվամիջոցը ֆինանսապես չփլուզվեր մի այնպիսի միջավայրում, որտեղ ֆինանսական հովանավորը սովորաբար վերահսկում է լրատվության բովանդակությունը:

2015թ. դեկտեմբերին Ազգային ժողովը փոխեց թվային հեռարձակման ցանցում ալիքների տրամադրումը կարգավորող օրենքը: Լրատվական դաշտի դիտորդ-փորձագետները քննադատեցին այս փոփոխությունները՝ պնդելով, որ դրանով փորձ է արվում լրատվական շուկայի վերահսկողությունը կենտրոնացնել իշխանամետ լրատվամիջոցների ձեռքին:

Իշխանությունները, ընդհանուր առմամբ, չեն վերահսկել առցանց լրատվամիջոցների բովանդակությունը, որը սոցիալական ցանցերի հետ միասին հանդիսացել է այլընտրանքային լրատվության կարևոր աղբյուր: Ի տարբերություն հեռարձակող լրատվամիջոցների՝ առցանց լրատվամիջոցները և սոցիալական հարթակները ներկայացրել են բազմազան քաղաքական դիրքորոշումներ: Մեծացել է քաղաքական կարևոր դեպքերի, հատկապես՝ բողոքի ակցիաների, կենդանի հեռարձակման կարևորությունն առցանց միջավայրում: Այնուհանդերձ, առցանց լրատվամիջոցներում ևս դրսևորվել է քաղաքական կապեր ունեցող սեփականատերերի ու գովազդատուների ազդեցությունը: Եղել են արժանահավատ հաղորդումներ առ այն, որ և՛ առցանց, և՛ հեռարձակող լրատվամիջոցները եղել են իշխանություններին մոտ կանգնած մի քանի անհատների ձեռքում: Շարունակել է ոչ թափանցիկ մնալ ավանդական ու առցանց լրատվամիջոցների սեփականատերերի հարցը:

Բռնություն և ոտնձգություններ. Ոստիկանները թիրախավորել ու բռնություն են գործադրել բողոքի ակցիաները լուսաբանող լրագրողների նկատմամբ: Օգոստոսի 9-ի դրությամբ լրագրողների դեմ բռնությունների համար իշխանությունները մեղադրանք են ներկայացրել 4 ոստիկանի: Քննությունը տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էր:

Հուլիսի 29-ին ոստիկանությունը և նրանց հետ համակարգված կերպով գործող քաղաքացիական հագուստով զինված անձինք, լրագրողների դեմ օգտագործեցին ձայնային նոնակներ, փայտե մահակներ ու մետաղյա ձողեր և վնասեցին ու առգրավեցին նրանց տեխնիկան, երբ ցրում էին «Սասնա Շոեր» խմբի պահանջները պաշտպանող ցուցարարներին: Արդյունքում 24 լրագրող և օպերատոր վնասվածքներ ստացան: Մինչ ցույցը

ցրելը ոստիկանները լրագրողներին հրահանգել էին անվտանգության նկատառումներով առանձնանալ հիմնական ամբոխից: Բազմաթիվ մարդիկ փաստում էին, որ լրագրողների կողմից այդ հրահանգը կատարելուց հետո ոստիկանությունն առաջին լուսաձայնային նոնակներն արձակեց նրանց ուղղությամբ:

Գլխավոր դատախազությունը և ՀՔԾ-ը բռնության փաստով քրեական գործեր հարուցեցին: Ոստիկանությունը նույնպես հայտարարեց, որ ցանկանում են պարզել լրագրողներին ծեծի ենթարկած քաղաքացիական անձանց ինքնությունը: Մինչ ոստիկանությունը փնտրում էր նրանց լրագրողներն ու սոցիալական կայքերի օգտատերերը նման երեք «քաղաքացիական անձի» լուսանկար հրապարակեցին, որոնցից մեկն Արշակ Հակոբյանն էր՝ ազգային Ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի անվտանգության ծառայության պետը, իսկ մյուս երկուսը Գասպարյանի անձնական թիկնապահներն էին: Ըստ պաշտոնական տեղեկատվության այս գործի հետ կապված մեղադրանք է ներկայացվել 8 քաղաքացիական անձանց, որոնցից 4-ը՝ Սեյրան Կարապետյան, Վլադիմիր Մխիթարյան, Դավիթ Սարգսյան և Կարեն Գրիգորյան, դատապարտվել են մեկ տարվա ազատազրկման, ինչպես նաև սահմանվել է տույժ 200.000 ՀՀ դրամի (420 ԱՄՆ դոլարի) չափով: Մյուսներից 3-ի՝ Գոռ Խաչատրյանի, Գարեգին Հովսեփյանի և Տիգրան Ահարոնյանի գործերն ուղարկվել են դատարան, իսկ Սարգիս Սահակյանի հետ կապված քննությունը դեռ շարունակվում էր: Նոյեմբերի 25-ի դրությամբ ոչ մի իրավապահի մեղադրանք չէր առաջադրվել և քննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր (տես՝ Մաս 1.գ., 1.դ. և 2.բ.):

2015թ. հունիսին Երևան քաղաքի կենտրոնում տեղի ունեցած խաղաղ ցույցը ցրելու ժամանակ ոստիկանության կողմից լրագրողներին ծեծելու ու բերման ենթարկելու դեպքից ավելի քան մեկ տարի անց օգոստոսի 9-ին ՀՔԾ-ը հայտարարեց, որ գործին առնչվող 4 լրագրողների աշխատանքին խոչընդոտելու համար մեղադրանք է առաջադրվել 4 ոստիկանների՝ Դավիթ Փերիխանյանին, Կոստան Բուդաղյանին, Տաճատ Նորատունկյանին և Արթուր Այվազյանին: Լրատվական ՀԿ-ներն այս որոշումը համարում էին ոչ համարժեք, քանի որ ոստիկանության բռնություններից տուժել էին երկու տասնյակից ավել լրագրողներ, ինչը նրանց պնդմամբ տեղի էր ունեցել բարձրաստիճան ոստիկանների հրամանով: Նոյեմբերի 28-ի դրությամբ 4 ոստիկանների նկատմամբ դատաքննությունը և բռնության մյուս դեպքերով քննությունը շարունակվում էր:

Գրաքննությունն ու բովանդակային սահմանափակումներ. Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցներն իշխանություններին քննադատող նյութեր ներկայացնելու դեպքում վախենում էին հաշվեհարդարից: Հաշվեհարդարի դրսևորումներ կարող էին լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիան կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները կամ եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանում էին, որ լրատվամիջոցը բարեհաճ չի իշխանությունների հանդեպ: Հաշվեհարդարի վախը հանգեցրել է լրատվամիջոցներում ինքնազրաքննության:

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Ապրիլին Ադրբեջանի հետ զինված հակամարտության սրացմանը զուգընթաց ինքնագրաքննության ավելի բարձր աստիճան արձանագրվեց լրատվամիջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերի օգտատերերի շրջանում, որոնք հակամարտության վերաբերյալ անվերապահորեն ներկայացնում էին միայն կառավարության ու Լեռնային Ղարաբաղի դեֆակտո իշխանությունների լրահոսը:

### **Ինտերնետի ազատություն**

Անհատները և խմբերն, ընդհանուր առմամբ, կարողացել են տեսակետներ արտահայտել ինտերնետի միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով: Որոշ իրավապաշտպան ակտիվիստներ ու ընդդիմադիր կուսակցությունների անդամներ այնուհանդերձ պնդում էին, որ իշխանությունները հսկել են իրենց էլեկտրոնային փոստն ու ինտերնետային գրազրությունը (տես՝ բաժին 1.4): Հուլիսի 17-ի առավոտյան ոստիկանության համալիրը զինված խմբի կողմից գրավելու առաջին օրն անբացատրելիորեն 45 րոպե անհասանելի էր դարձել Ֆեյսբուքը: Սա իշխանությունների կողմից ինտերնետի հասանելիությունը խաթարելու հնարավոր միակ դեպքն էր տարվա ընթացքում:

Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների 2015թ. Հայաստանում ինտերնետից օգտվում էր բնակչության 58 տոկոսը:

### **Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ**

Եղել են իշխանությունների կողմից ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների սահմանափակումների մասին որոշ հաղորդումներ:

Առաջատար պետական բուհերի թե՛ ղեկավար կազմը, և թե՛ ուսանողական խորհուրդները քաղաքականացված են ու փոխկապակցված Հանրապետական կուսակցության հետ: Օրինակ՝ Երևանի պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Մերժ Սարգսյանը երկրի նախագահն է: Նախարարները նախագահել են այլ բուհերի հոգաբարձուների խորհուրդներում կամ ընդգրկված եղել դրանց կազմում: Ըստ իրավապաշտպան դիտորդների ուսանողական խորհուրդների նկատմամբ բուհերի մեծ մասում եղել են տարաբնույթ ճնշումներ, որպեսզի նրանք պաշտպանեն բուհի շահերը և ոչ թե ուսանողների շահերը և կարողանան ուսանողական կազմի ուշադրության կենտրոնում պահել ոչ քաղաքական ու պակաս զգայուն հարցերը:

Ընտրությունների ժամանակ, ինչպես նաև 2015թ. դեկտեմբերի հանրաքվեի ժամանակ հանրակրթական կառույցները (դպրոցներ, բուհեր ու անգամ մանկապարտեզներ) իշխանությունների կողմից օգտագործվել են Հանրապետական կուսակցությանն աջակցելու ու երիտասարդների վրա ներազդելու նպատակով: Ուսուցիչների ու դասախոսների համար զբաղվածության հնարավորությունների բացակայությունը սահմանափակել է նման

քաղաքական գործունեության մեջ ներքաշվելուց հրաժարվելու նրանց պատրաստակամությունը: 2015թ. դեկտեմբերի հանրաքվեի ժամանակ եղան բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ դպրոցի տնօրեններն իշխանական կուսակցության դրոմամբ աշխատակիցներին պարտադրել են պաշտպանել սահմանադրական բարեփոխումների «այո» քարոզարշավը: Դպրոցների ղեկավարներից շատերը նաև ներգրավված են եղել հանրաքվեի ընտրական հանձնաժողովներում՝ ստեղծելով ընտրախախտումների հնարավորություն: Լրատվամիջոցներում հրապարակում է եղել մի ուսուցչի՝ Կարպիս Փաշոյանի մասին, ով կորցրեց իր աշխատանքը՝ հրաժարվելով պաշտպանել «այո» արշավը և ձգտելով կանխել ընտրախախտումները հանրաքվեի ընթացքում:

## **բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն**

### **Հավաքների ազատություն**

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է հավաքների ազատության իրավունքը: Թեպետ տարվա ընթացքում շատ փոքրամասշտաբ հավաքներ անցել են առանց որևէ միջամտության, սակայն բազմաթիվ դեպքերում իշխանությունները բռնություն ու անհամաչափ ուժ են կիրառել ցուցարարների դեմ կամ կամայականորեն բերման են ենթարկել նրանց կամ որևէ այլ կերպ խոչընդոտել խաղաղ հավաքներին:

Հուլիսի 17-ից մինչև հուլիսի 30-ը և հաջորդիվ, մինչ «Մասնա Ծոեր» խմբի կողմից գրավված էր Երևանում Ոստիկանության պարեկապահակետային գնդի Էրեբունու տարածքը, խմբի համակիրները կամ նրանց քաղաքական պահանջներին սատարող մարդիկ բազմաթիվ ցույցեր էին անցկացնում: Ցուցարարները հիմնականում հավաքվում էին Ազատության հրապարակում կամ Խորենացու փողոցում ու երթով անցնում էին Երևանի փողոցներով: Ոստիկանությունը միջամտում էր երթերին, կիրառում ուժ և կամայականորեն բերման ենթարկում ցույցերի հարյուրավոր մասնակիցների՝ նրանցից շատերի հանդեպ դրսևորելով բռնություն և հաճախ պնդելով, որ մասնակցել են արգելված հավաքի: Հայաստանի Հելսինկյան կոմիտեն հուլիսի 17-ից օգոստոսի 5-ի դեպքերի վերաբերյալ ներկայացրած իր զեկույցում նշում էր, որ հավաքները «ուղեկցվել են ոստիկանության կողմից կոպիտ միջամտություններով և աննախադեպ խախտումներով»:

Բրյուսելում գործող Մարդու իրավունքների միջազգային գործընկերություն (ՄԻՄԳ) ՀԿ-ը Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի (ՔՀՊ) շրջանակում, որն իրավապաշտպան ՀԿ-ների միջազգային միավորում է, անցկացրեց փաստահավաք առաքելություն Հայաստանում հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը և հանրահավաքները բնութագրեց որպես առավելապես խաղաղ: ՔՀՊ դիտորդները նաև դիտարկեցին հանրահավաքների առաջնորդների ջանքերը հանրության կողմից բռնարարները զսպելու առումով: ՔՀՊ-ը դիտարկեց երկու դեպք՝ հուլիսի 20-ի և հուլիսի 29-ի դեպքերը, երբ ոստիկանության կողմից

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո



ցուցարարների դեմ օգտագործվել էր ոչ մահաբեր զենք և եզրակացրեց, որ նման զենքի կիրառումը հուլիսի 20-ին արդարացված էր, քանզի ամբոխն ագրեսիվ էր գործում: ՔՀՊ-ը եզրակացրեց, որ հաջորդիվ ոստիկանությունն օգտագործել է անհամաչափ ուժ այն բանից հետո, երբ ցուցարարները ցրվել են: ՔՀՊ-ը եզրակացրեց, որ հուլիսի 29-ին ոստիկանության կողմից նռնականետներից արձակվող ու ձեռքի լուսաձայնային նռնակների կիրառումն անհամաչափ էր, չափից դուրս շատ, առանց տարբերություն դնելու և նախազգուշացնելու:

Ըստ իրավական փորձագետների՝ ոստիկանության կողմից խաղաղ ցուցարարների կամայական բերման ենթարկելը «վարչական կալանքի» դե-ֆակտո դրսևորում է, որն օրենքով վերացվել է 2005թ.: Ըստ իրավական փորձագետների և ՄԻՄԳ-ի ոստիկանությունը բերման ենթարկելը կիրառել է որպես առավելապես խաղաղ հանդիսացող ցույցերը դադարեցնելու միջոց:

Հելսինկյան կոմիտեն իր զեկույցում, որտեղ ամփոփում է 2015թ. հուլիսի մինչև 2016թ. հունիս տեղի ունեցած 126 հավաքների վերաբերյալ դիտարկումները, նշում էր, որ այդ հավաքներին հավաքի մասնակիցների համեմատ անհամաչափորեն մեծ էր ոստիկանական ներկայությունը և որ ոստիկանությունը կիրառում էր բացարձակ արգելքներ որոշակի վայրերում, օրինակ՝ նախագահական պալատի դիմաց ցույցեր անցկացնելու վերաբերյալ: Ձեկույցում նշվում էր, որ 29 դեպքում ոստիկանության կողմից եղել է զգալի միջամտություն, այդ թվում՝ ձերբակալություն, բռնություն, մասնակիցների պարտադրված տեղափոխում մի վայրից մյուսը: Ձեկույցում կասկածի տակ են առնվել նաև հավաքների ազատության մասին օրենքների վերաբերյալ ոստիկանության կամայական մեկնաբանությունները, ինչպես նաև ոստիկանների կողմից կիրառած մեթոդները, ինչպիսիք են՝ մասնակիցներին ուղղված հրամանները կամ ցուցումները, առանց հիմնավորումների կամ պատճառի, իսկ հետագայում, չենթարկվելու դեպքում, «օրինական պահանջին» ցույց տված դիմադրության համար՝ մեղադրանքը:

Ըստ պաշտոնական աղբյուրների նոյեմբերի 25-ի դրությամբ ՀԲԾ-ի կողմից որևէ մեկին մեղադրանք չի առաջադրվել և չեն բացահայտվել կասկածյալներ հուլիսյան բողոքի ակցիաների ժամանակ իրավապահների կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու հաղորդումների հետ կապված:

## **Միավորումների ազատություն**

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ և օրենքներով և կառավարությունը, ընդհանուր առմամբ հարգել է այն: Կառավարության կողմից չի ձևավորվել ՀԿ-ների ֆինանսական կայունությանն օժանդակող իրավական դաշտ: Օրենքը թույլ չի տալիս այս կազմակերպություններին իրենց ծառայությունների դիմաց ընդունել վճարումներ, ձևավորել հիմնադրամներ կամ ուղղակիորեն ձեռնամուխ լինել շահույթ հետապնդող գործունեության՝

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

իրենց գործառնական ծախսերը հոգալու ու կանոնադրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար: Արդյունքում ՀԿ-ները կախման մեջ էին գտնվում դրամաշնորհներից և նվիրատվություններից:

#### զ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը [www.state.gov/religiousfreedomreport/](http://www.state.gov/religiousfreedomreport/) էջում:

#### դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, և կառավարությունը հիմնականում հարգել է այս իրավունքները:

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Իշխանությունները հիմնականում ապաստան հայցողի դիմումը գրանցելուց հետո ազատ չեն արձակել ապաստան հայցողներին, ովքեր պատիժ են կրել երկիր անօրինական մուտք գործելու համար: Փոխարենը՝ նրանցից պահանջվել է մնալ նախնական կալանքի տակ մինչև ապաստան տրամադրելու հայցով որոշման կայացումը կամ կրել պատժի մնացած մասը, չնայած քրեական օրենսգրքով ապաստան հայցողներն ազատվում են քրեական պատասխանատվությունից: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) գրասենյակի հաղորդմամբ իրավասու մարմինները 2015 թ.-ի հոկտեմբերին կալանքի տակ էին վերցրել երկու աֆղանստանցի ապաստան հայցողների: Նրանք կալանքի տակ էին վերցվել, չնայած որ սահմանին ձերբակալվելուց հետո գրեթե անմիջապես ապաստանի համար դիմում էին ներկայացրել ու չնայած այն փաստին, որ նրանց դիմումների վերաբերյալ նոյեմբերի 28-ի դրությամբ դեռևս որոշում կայացված չէր: Երկարատև կալանքի հետևանքով երկու անհատների մոտ էլ ի հայտ եկան ֆիզիկական ու հոգեբանական առողջության սուր խնդիրներ: Նոյեմբերի 15-ին ընդհանուր իրավասության դատարանը երկու ապաստան հայցողներին էլ մեղավոր ճանաչեց սահմանի ապօրինի հատման համար՝ դատապարտելով նրանց երեք տարվա ազատազրկման, որն այս հանցանքի համար նախատեսված նվազագույն պատժաչափն է:

Ըստ UNHCR-ի փախստականի կարգավիճակի սահմանման հետ կապված ընթացակարգերի ու որոշումների կայացման գործընթացի ընդհանուր որակը բարելավվել է, սակայն մտահոգություններ են մնում որոշակի կրոնական նկարագիր ունեցող անձանց ապաստան հայցելու գործերի դատավարությունների առնչությամբ: UNHCR-ը նկատում էր, որ ապաստանի հետ կապված ընթացակարգերը ու փախստականներին վերաբերող կարգերի

իրականացման հետ կապված հարցերը ողողված են անվտանգության նկատառումներով: UNHCR-ը մտահոգությամբ նշում էր ԱՄՏ-ի մեծացող ազդեցությունն ապաստանի տրամադրման մասին Միգրացիայի պետական ծառայության կողմից որոշումների կայացման վրա և անօրինական ճանապարհով երկիր մուտք գործած ոչ քրիստոնյա ապաստան հայցողների նկատմամբ կիրառվող կալանքի երկար ժամկետը: Օրինակ՝ 2015թ. վերջից սկսած իրավասու մարմիններն ավելի խիստ մոտեցում են ցուցաբերել ազգությամբ ոչ հայ իրաքցի ապաստան հայցողների նկատմամբ:

Ըստ UNHCR-ի կասկածելի են մնում բահրեյնցի մի ապաստան հայցողի մեկնելու հանգամանքները, ով կալանավորվել էր երկրում Ինտերպոլի կարմիր ծանուցման հիման վրա: Իրավապաշտպան ՀԿ-ների հաղորդմամբ իրավասու մարմինները նրան ստիպել էին մեկնել որևէ երրորդ երկիր՝ որպես արտահանձնման այլընտրանք:

Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ), փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են UNHCR-ի և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (2.10 ԱՄՆ դոլար) վավերականության յուրաքանչյուր տարվա համար:

## **Ներքին տեղահանված անձինք**

2015թ. մայիսի դրությամբ ըստ Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոնի 1988-94 թթ. շուրջ 65.000 տարիանված տնային տնտեսություններից դեռևս մոտ 8.400 ՆՏԱ դեռևս եղել է տեղահան վիճակում: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները:

## **Փախստականների պաշտպանություն**

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքը հաշվի է առնում երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցողների և տրավմա վերապրածների առանձնահատուկ կարիքները: Փոփոխված օրենքը կալանավայրերին ևս թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ:

Մարդու իրավունքների գեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարություն, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Ապրիլի 1-5-ը շփման գծում և հայ-ադրբեջանական միջազգային սահմանին լարվածության ավելացման հետ կապված շփման գծին հարող բնակավայրերից եղել են քաղաքացիական անձանց տեղահանումներ: Տեղահանվածների մի մասը մնացել են Լեռնային Ղարաբաղում, իսկ մյուսները մուտք են գործել Հայաստան այստեղ ապաստան գտնելու համար: Ըստ UNHCR-ի դիտորդների՝ տեղահանվածների ճնշող մեծամասնությունը կազմում են կանայք, երեխաները, տարեցները՝ հիմնականում շփման գծին մոտ գտնվող գյուղական համայնքներից: UNHCR-ի հաշվարկներով տեղահանվածների ընդհանուր թիվը տեղահանությունների ամենասուր պահին կազմում էր 2.300 հոգի և նրանցից 540-ը նոյեմբերի 8-ի դրությամբ գտնվում էին երկրում:

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին իրավասու մարմինները շարունակել են տրամադրել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ: Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մատուցումը իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները: Փախստականներին տրամադրված կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակի և ունեցել են վատ պայմաններ, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էին մնալ որպես ամենամեծ մտահոգություն: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին վարձավճարի սուբսիդավորման ծրագրից, որին աջակցում էին UNHCR-ը և Սփյուռքի կազմակերպությունները: 2015թ. իրավասու մարմինները բացեցին փախստականների ինտեգրման տուն նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էր անվճար օթևան: Սիրիահայերը խոսում են մեկ այլ բարբառով և լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի հարցում, և սկզբնական շրջանում՝ կրթության հարցում: Բացի այդ, փախստականները նաև բախվում էին բոլոր այն սոցիալ-տնտեսական դժվարություններին, որոնք ծառայած են երկրի բնակչության առաջ: Ազգությամբ ոչ հայ փախստականների հպատակագրման համար պահանջվում էր երեք տարվա օրինական բնակություն երկրում:

Հիմնարար լուծումներ. Սիրիայից ժամանած ազգությամբ հայ անձանց համար, ովքեր մնում էին երկրում, կառավարությունն առաջարկում է քաղաքացիության տրամադրում արագացված կարգով: Հուլիսի 21-ին կառավարությունն ընդունեց մի նոր հայեցակարգային փաստաթուղթ, որտեղ նկարագրում է ապաստան ու փախստականի կարգավիճակ ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ուղղությամբ սահմանվող նպատակները: Ըստ UNHCR-ի փախստականների պաշտպանության իրավական դաշտի ընդլայնումը սկզբունքորեն ողջունելի էր, սակայն հայեցակարգը չէր անդրադառնում

Հայաստանի քաղաքացիությունն ստացած սիրիացիներին, այդ կերպ դուրս թողնելով տեղահանված սիրիացիների մեծ մասին, ովքեր հակամարտության սկզբից ի վեր ժամանել էին Հայաստան: Հայեցակարգը նաև չէր անդրադառնում ինտեգրման այնպիսի կարևոր բաղադրիչների, ինչպիսիք են լեզվական կարիքները և կրթության հասանելիությունը:

### **Քաղաքացիություն չունեցող անձինք**

Հունիսի 30-ի դրությամբ ուստիկանության անձնագրերի ու վիզաների վարչության տվյալներով երկրում եղել են շուրջ 30 քաղաքացիություն չունեցող անձ: Բացի այդ, իրավասու մարմինները որպես քաղաքացիություն չունեցող անձ են որակում նաև Ադրբեջանի 1.400 փախստականների: Մայիսին քաղաքացիության մասին օրենքում կատարված փոփոխությունները նպաստեցին քաղաքացիության բացակայության կանխարգելմանն ու կրճատմանը: Այս փոփոխություններով երկրի տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին, ինչպես նաև քաղաքացիությունը երեխային փոխանցելու հնարավորություն չունեցող Հայաստանի քաղաքացիություն ունեցող օտարերկրացիների երեխաներին տրվում է Հայաստանի քաղաքացիություն: Այս փոփոխությունները դե-ֆակտո անդրադարձան այն անձանց վրա, ովքեր ծնվել են Լեռնային Ղարաբաղի տարածքում և կարող են ցանկության դեպքում ձեռք բերել հայաստանյան անձը հաստատող փաստաթղթեր: Կային դիպվածային պատմություններ, որ փաստաթղթեր չունեցող որոշ անձինք գտնվում են քաղաքացիություն չունեցողի կարգավիճակում կամ այդ կարգավիճակում հայտնվելու վտանգի առջև, որովհետև անկանոն կերպով են մուտք գործել երկիր և բնակվել են հեռավոր բնակավայրերում ու դեռ Խորհրդային անձնագրեր ունեն: Հպատակագրման դիմում ներկայացրած անձինք մերժման դեպքում իրավունք չունենին բողոքարկել: Քաղաքացիություն չունենալու հանգամանքը որոշելու հստակ ընթացակարգ չկար, և չկար ազգային օրենսդրություն քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների մասին:

## **ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ**

Չնայած սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն, սակայն իշխանությունները շարունակել են միջամտել ընտրական գործընթացին այնպիսի գործելակերպերով, որոնք նախատեսված են իշխող հանրապետական կուսակցության գերիշխող դիրքի երաշխավորման համար:

Մարդու իրավունքների գեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

2015թ. դեկտեմբերին երկրում անցկացվեց սահմանադրական հանրաքվե, որը հաջորդիվ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ միասին, փոխեց երկրի կիսանախագահական կառավարման համակարգը կառավարման խորհրդարանական համակարգով՝ վերացնելով երկրի նախագահի ու երկու խոշոր քաղաքների քաղաքապետերի ուղղակի ընտրությունը և ներդնելով բարդ համամասնական ընտրակարգ, որը շատերը բնութագրում են որպես կիսամեծամասնական ընտրակարգ:

### **Ընտրություններ և քաղաքական մասնակցություն**

Կայացած վերջին ընտրությունները. Երկրում նախագահական ընտրությունները եղել են 2013թ., իսկ խորհրդարանական՝ 2012թ.: ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների ու մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) նախագահական ընտրությունները բնութագրեց որպես լավ կազմակերպված ընտրություններ, որոնք զուգակցվեցին թերություններով, այդ թվում՝ անհավասար խաղի պայմաններ, լուրջ ընտրախախտումներ քվեարկության օրը և մտահոգություններ ընտրական գործընթացի անաչառության վերաբերյալ: Ընտրակաշառքի, գործող պաշտոնյաների օգտին վարչական չարաշահումների, բացակա ընտրողների փոխարեն ինքնակոչ անձանց քվեարկության փաստերի և բազմաթիվ տեղամասերում չարտոնված կազմակերպված խմբերի առկայության մասին հաղորդումները հասարակության աչքերում խարխուլեցին ընտրական գործընթացը և վարկաբեկեցին ընտրական ինստիտուտը հասարակության աչքերում: Նմանատիպ խախտումները նաև ստվեր նետեցին 2012թ. Ազգային ժողովի ընտրությունների վրա, որի ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն արձանագրեց քվեներ գնելու արժանահավատ պնդումներ, բողոքների ներկայացման ու բողոքարկման գործընթացի թերություններ ու ընտրական օրենսգրքի բացեր՝ չնայած կատարված բարելավումներին:

2015թ. դեկտեմբերին քաղաքացիները մասնակցեցին նախագահի կողմից նախաձեռնված հանրաքվեի, որով փոփոխություն էր կատարվում սահմանադրության մեջ կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի անցնելու համար: Քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպություններ և որոշ ընդդիմադիր քաղաքական ուժեր պնդում էին, որ հասարակության մեջ նման փոփոխությունների պահանջարկ չկար, և դա փորձ էր իշխանական կուսակցության կողմից երկարաձգելու երկրի ներկայիս առաջնորդների իշխանությունը: Սահմանադրական հանրաքվեն անցավ խաղաղ պայմաններում, բայց եղան արժանահավատ լրատվական հաղորդումներ կառավարության հետ առնչություն ունեցողների կողմից թույլ տված համակարգային կեղծիքների վերաբերյալ: Եղան նաև հաղորդումներ, որ ստվար զանգված կազմող պետական հիմնարկություններում պաշտոնյաները սպառնացել ու ճնշում են գործադրել, որպեսզի աշխատակիցները մասնակցեն հանրաքվեին:

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Տեղական դիտորդները և լրատվամիջոցները հանրաքվեի ընթացքում արձանագրել են այնպիսի խախտումներ, ինչպիսիք են քվեատուփի լցումումը, քվեների գնումը, նույն անձի կողմից բազմակի քվեարկությունը և ձայների հաշվարկի ընթացքում տեղ գտած կեղծիքները: Իրավասու մարմինները հանրաքվեի հետ կապված կեղծիքների ու խախտումների դեպքերով բազմաթիվ քննություններ են իրականացրել, սակայն դրանցից և ոչ մեկով որևէ մեկ ընտրախախտ չազատագրվեց: Դատարան ուղարկված 42 գործերով 36 հոգու նկատմամբ սահմանվեց տույժ, իսկ 10 հոգի պայմանական ազատագրկման դատապարտվեցին, որոնցից մեկն էլ վերաքննիչ դատարանում արդարացվեց:

Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Թեպետ օրենքը բացեիքաց չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը, սակայն իշխանությունները քաղաքական բազմակարծությունը ճնշել են այլ ուղիներով:

Շարունակվել են դժգոհությունները, որ ընդդիմադիր կուսակցությունների գործունեությունը սահմանափակելու համար իշխանություններն օգտագործել են իրենց վարչական և իրավական ռեսուրսները՝ կանխելու կուսակցություններին ուղղվող ֆինանսական հատկացումները, այդ թվում նաև ընտրովի հարկային ստուգումների միջոցով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հայտնում են գործող պաշտոնյաների կողմից ընտրարշավների ընթացքում կառավարական ռեսուրսների չարաշահման մասին, այդ թվում՝ սպառնալիքներ գործող պաշտոնյայի կամ սահմանադրական բարեփոխումների օգտին չքվեարկելու դեպքում ընտանիքին սոցիալական նպաստից կամ ուսանողներին ուսման վարձի արտոնություններից զրկելու վերաբերյալ:

Իշխանական կուսակցության հետ կապերն ըստ հաղորդումների թույլ են տվել պահպանել աշխատանքն ու աշխատանքային առաջխաղացում ունենալ թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածներում: Տեղական դիտորդների կողմից եղել են բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ որոշ համայնքապետեր, որոնք առաջադրվել են որպես անկախ թեկնածուներ, ընտրվելուց հետո անդամագրվել են Հանրապետական կուսակցությանը կամ դարձել են կուսակցությանը հավատարիմ անձնավորություն, որովհետև մտահոգություն ունեին, որ այլ կերպ չէին կարողանա արդյունավետ կերպով իրականացնել իրենց աշխատանքը: Քանի որ համայնքները մասամբ կախման մեջ են գտնվում պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից, այդ հաղորդումներում ակնարկվում էր, որ պետական բյուջեից համայնքապետի ստացած աջակցության մակարդակը պայմանավորված էր համայնքապետի կուսակցական պատկանելությամբ: Նույն կերպ, պետական դպրոցներում, բուհերում, բուժհաստատություններում ու այլ պետական ֆինանսավորմամբ գործող հիմնարկություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու կամ ռեսուրսներ ստանալու համար պետք է լինել կա՛մ Հանրապետական կուսակցության անդամ, կա՛մ կուսակցությանը հավատարիմ անձնավորություն: Ըստ լրատվամիջոցների ու այլ հաղորդումների բուհերում

իշխանական կուսակցության անդամ կամ հավատարիմ անձնավորություն դառնալը ճանապարհ էր հարթում դեպի ավելի բարձր գնահատականներ, ուսման վարձի և այլ տիպի արտոնություններ: Իշխանական կուսակցությունն ու վերջինիս թեկնածուները ենթադրաբար չարաշահել են վարչական ռեսուրսը պետական և որոշ մասնավոր ձեռնարկություններում աշխատողներին ահաբեկելու ու նրանց օժանդակությունը ստանալու համար:

Լրատվական հաղորդումների, իրավապաշտպան ՀԿ-ների ու որոշ ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդների պնդումների համաձայն իշխանությունները ձևավորել, կառավարել ու ներդրել են ընդդիմադիր կուսակցություններ ու քաղաքական գործիչներ: Այս պնդումները՝ հիմնավորված թե անհիմն, քաղաքական գործընթացի նկատմամբ հասարակության վստահության նվազեցման մեկ այլ պատճառ էին:

Եղել են դժգոհություններ, որ կապեր ունեցող գործարարներն իրենց շահույթից որոշակի մաս ուղղել են իշխանական կուսակցությանը կամ իշխանական քաղաքական վերնախավի հետ կապ ունեցող այլ կուսակցություններին՝ հարկեր չվճարելու կամ հարկման մեղմ դաշտում հայտնվելու տեսքով տնտեսական առավելություններ ստանալու դիմաց: Եղել են նաև պնդումներ, որ աշխատանքի ընդունման որոշումներում իշխանությունները խտրական վերաբերմունք են հանդես բերել ընդդիմադիր կուսակցությունների անդամների հանդեպ:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Հասարակության աստիճանակարգային ու նահապետական բնույթը խոչընդոտել է կանանց մասնակցությանը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև հանրային հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում: Տարեվերջի դրությամբ 131 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար 13 կին պատգամավոր, կառավարությունում՝ 18 նախարարներից կին էին 3-ը, իսկ երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր: Երևանի ավագանու 65 ընտրված անդամներից միայն տասն էին կանայք:

#### **ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար դատապարտվելու դեպքում սահմանված են քրեական պատժամիջոցներ. սակայն կառավարությունն օրենքն արդյունավետորեն չի կիրառել, և շատ պաշտոնյաներ անպատժելիորեն ներգրավված են եղել կոռուպցիոն գործողությունների մեջ: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ պնդումներ պետական կոռուպցիայի վերաբերյալ: Վորլդ Էկոնոմիք Ֆորումի 2015-16թթ. Գլոբալ մրցունակության զեկույցում կոռուպցիան ներկայացվում էր որպես երկրում տնտեսական գործունեություն իրականացնելու հարցում առավել խնդրահարույց խոչընդոտներից մեկը: Ֆրիդոմ Հաուսի

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո



2016թ. Անցումային պետությունների զեկույցը նկատում էր, որ համատարած կոռուպցիայի դեմ պայքարելու կառավարության ջանքերը մնացել են մակերեսային:

Կոռուպցիա. Թեև սահմանադրությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արգելվում է պետական պաշտոն զբաղեցնել, սակայն գործադիր պաշտոնյաները և օլիգարխները շարունակել են տեղեր զբաղեցնել Ազգային ժողովում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ օգտագործել են պաշտոններն ի նպաստ իրենց սեփական գործարար շահերի: Շատ դիտորդների գնահատմամբ կառավարության հետ կապված կամ պետական պաշտոններ զբաղեցնող օլիգարխները տնտեսությունը մենաշնորհային են դարձրել: Ավելին, իշխանություններն ըստ հաղորդումների շարունակել են անտեսել լրատվական ու այլ հաղորդումները, որոնք առնչվում էին պետական պաշտոնյաների կոռուպացված գործունեությանը:

Եղել են բազմաթիվ լրատվական հաղորդումներ պետական համակարգային կոռուպցիայի վերաբերյալ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շինարարություն, հանրային կառավարում, դատական համակարգ, գնման ընթացակարգեր, պետության կողմից շնորհվող դրամաշնորհներ (այդ թվում՝ նախագահականի կողմից տրվող), առողջապահություն, հարկեր, իրավապահ, կրթական և զինվորական ոլորտներ: Եղել են պնդումներ պետական միջոցների յուրացման մասին, կասկածելի բիզնես գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավման, կառավարության հետ կապեր ունեցող ընկերություններին հարկային և մաքսային արտոնություններ տալու մասին:

Ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրացումից հետո վատ կառավարման, միջոցների անարդյունավետ բաշխման և պաշտպանության նախարարությունում այլ կոռուպացված գործելակերպերի պատճառով բանակում տիրող առկա վատ պայմանների վերաբերյալ պնդումները հանգեցրին նրան, որ իշխանությունները հայտարարեցին հակակոռուպցիոն միջոցների մասին՝ այդ թվում անցկացվեցին քննություններ ու աշխատանքից հեռացվեցին գնումներում ներգրավված պաշտպանության ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ: Չնայած բարձր մակարդակում կոնկրետ քայլեր ձեռնարկելու ու անհարկի պետական ծախսումները կրճատելու մասին հանձնառությանը՝ միակ տեսանկյունի արդյունքը կառավարության ծառայողական մեքենաների թվի կճատումը եղավ:

Ապրիլի 4-ին Հետք առցանց հետաքննող հրատարակությունը ներկայացրեց Արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԿ) պետ Միհրան Պողոսյանի օֆշորային ակտիվները: Ըստ հրապարակման Պողոսյանն օգտագործել էր իր պաշտոնական դիրքը, ինչպես նաև ԴԱՀԿ-ի ռեսուրսներն իր տարաբնույթ բիզնես շահերն առաջ տանելու համար: Օրինակ՝ Պողոսյանի Պանամայում գրանցված ընկերություններից մեկը կատարում էր ԴԱՀԿ-ի կողմից աճուրդի հանվող գույքի գնահատումը: Ապրիլի 18-ին Պողոսյանը հրաժարական տվեց՝ նշելով, որ չի

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

ուգում, որ գուգահեռներ անցկացվեն իր և այդ գեկույցում հիշատակված այլ անձանց միջև: Ապրիլի 29-ին ՀՔԾ-ը հայտարարեց, որ Հետքի ներկայացրած փաստերի հիման վրա քրեական գործ է հարուցվել անօրինական ձեռնարկատիրության մեղադրանքով, որը պատժվում է երկու տարվա ազատազրկմամբ: Նոյեմբերի 25-ի դրությամբ քննությունը շարունակվում էր, սակայն Միհրան Պողոսյանին կամ որևէ այլ անձի այս գործով դեռ մեղադրանք չէր ներկայացվել:

Եկամուտների ու գույքի հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր. սրանք ինտերնետում մասնակիորեն հասանելի են եղել հանրությանը: Հայտարարագրեր չներկայացնելու կամ դրանցում կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար սահմանված են եղել վարչական տույժեր, սակայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, որը պատասխանատու է հայտարարագրերի ընդունման ու դիտարկման համար, իրավասություն չունեն ստուգել դրանց հավաստիությունը կամ հայտարարագրված եկամուտների ծագումը կամ պաշտոնյաների նկատմամբ կիրառել պատժամիջոցներ կեղծ տվյալներ ներկայացնելու համար: Բազմաթիվ պաշտոնյաներ՝ դատավորներ, Ազգային ժողովի պատգամավորներ և նրանց կանայք/ամուսինները հայտարարագրել են եկամուտների ու ակտիվների անբացատրելի մեծ գումարներ, այդ թվում՝ մեծ անձնական նվիրատվություններ և փոխառություններից ստացվող միջոցներ: Իրավասու մարմինները քննություններ չեն անցկացրել այս հայտարարագրերի անհամապատասխանությունների կամ անբացատրելի հարստության հանգամանքներով:

Տեղեկատվության հասանելիությունը հանրության համար. Թեև օրենքը սահմանում է պաշտոնական տեղեկատվության հանրային հասանելիություն, սակայն որոշ պետական կառույցներ և պաշտոնյաներ չեն կամեցել ապահովել այն: Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ՀԿ-ի և Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ամենամեծ մարտահրավերը մնում էր այն, որ պետական մարմինները, որոնք ինֆորմացիայի ազատության պահանջը բավարարելու տպավորություն էին ստեղծում, բայց այնպիսի պատասխաններ էին տալիս, որոնք կամ տեղին չէին, կամ էլ ամբողջական չէին: Արդյունքում ՀԿ-ներն ավելի շատ բողոքներ են ներկայացրել դատարան տեղեկատվության ազատության պահանջով: Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկատվության ազատության վերաբերյալ վերջին տարիներին ներկայացված դատական հայցերի արդյունքում դատարանները կառավարությունից պահանջել են առավել ճշգրիտ տեղեկատվություն ապահովել, բայց դատարանները սովորաբար չեն ձգտել պատժամիջոցներ կիրառել այդ պահանջները չկատարած պաշտոնյաների նկատմամբ:

**ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր, ընդհանուր առմամբ, գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Չնայած պետական պաշտոնյաները երբեմն արձագանքել են նրանց կարծիքներին և համագործակցել, ժամանակ առ ժամանակ եղել են նաև ակտիվիստների հետապնդումներ:

Իշխանության իրավասու մարմինները հիմնականում համաձայնել են հանդիպել տեղական ՀԿ-ների դիտորդների հետ և հետևել են նրանց առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Կառավարությունը հակակոռուպցիոն հարցերով նաև խորհրդակցել է ՀԿ-ների հետ. սակայն այս ամենին չեն հաջորդել հետագա քայլեր: Կառավարությունը զգալի միջոցներ չի ձեռնարկել՝ արձագանքելու իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների վերաբերյալ ՀԿ-ների հնչեցրած մեղադրանքներին: Այն դեպքերում, երբ պաշտոնյաները քննություն են իրականացրել, որպես կանոն եզրակացրել են, որ մեղադրանքները հիմնավորված չեն:

Իրավասու մարմինների կողմից եղել են հալածանքներ քաղաքացիական ակտիվիստների և քաղաքացիների նկատմամբ, ովքեր մասնակցել են խաղաղ ցույցերի: Հուլիսի 26-27-ին ոստիկանությունը կալանավորեց Գյումրիում գործող հակակոռուպցիոն «Ասպարեզ» լրագրողական ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանին, ով փոքր ծավրոջ դանակ ունենալու համար արգելանքի տակ պահվեց ավելի քան 16 ժամ՝ առանց փաստաբանի, առանց ընտանիքի հետ կապ հաստատելու հնարավորության և առանց հիմնական հարմարությունների: Քննիչներն արձակեցին նրան հուլիսի 29-ին, երբ հիմնավորվեց, որ դանակն անօրինական զենք չէր: Բարսեղյանը և նրա փաստաբանը պնդում էին, որ կալանավորումն անօրինական էր ու պայմանավորված էր Բարսեղյանի քաղաքացիական ակտիվությամբ:

Տարվա ընթացքում իրավապաշտպան կազմակերպությունները և լրատվամիջոցները հաղորդել են իրավապաշտպան Մարինա Պողոսյանի դեմ շարունակվող հալածանքների ու սպառնալիքների մասին: Պողոսյանի Վելես ՀԿ-ն իրավական աջակցություն էր ցուցաբերում ենթադրաբար կառավարության հետ կապ ունեցող տոկոսով փող տվողների գործողություններին:

Հոկտեմբերի 21-ին «Միջազգային հումանիտար զարգացման» հայկական կազմակերպության անդամները Սպուտնիկ Արմենիա ռուսական վեբ կայքում մեղադրանքներ ներկայացրեցին

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

հայտնի հայկական կազմակերպություններին՝ նրանց ներկայացնելով որպես ազգային անվտանգության սպառնալիք ու երկրում հեղափոխություն նախապատրաստողներ:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների կողմից չարաշահումներից պաշտպանելու համար: Հունվարի 12-ին երկրի երրորդ օմբուդսմեն Կարեն Անդրեասյանն անսպասելիորեն ու առանց բացատրությունների հրաժարական տվեց, որն ըստ լրատվամիջոցներում շրջանառվող լուրերի պայմանավորված էր նրա նկատմամբ իշխող Հանրապետական կուսակցության ու իշխանության գործադիր ճյուղի հետզհետե ավելացող քաղաքական ճնշումներով: Փետրվարի 23-ին Ազգային ժողովը Կարեն Անդրեասյանին փոխարինելու համար հաստատեց Արման Թաթոյանի թեկնածությունը: ՄԻՊ գրասենյակը հանդես է եկել որպես արդյունավետ պաշտպան՝ հրապարակելով թեմատիկ ու հերթական զեկույցներ մարդու իրավունքներին վերաբերող հարցերի շուրջ: Մասնավորապես՝ այն անդրադարձել ու կառավարության ուշադրությանն է ներկայացրել մարդու իրավունքների խախտումները, անօրինական կալանավորումները և հուլիսին ոստիկանների կողմից թույլ տված թերացումները՝ ցուցարարներին ուժով ցրելու ժամանակ:

## ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԱՆՅ ԹՐԱՏԻՔԻՆԳ

### Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ընտանեկան բռնության մասին օրենսդրության բացակայության պարագայում ամուսնական բռնաբարության պարագայում հետապնդում է իրականացվել բռնաբարության ընդհանուր հոդվածներով: Նույն կերպ, ընտանեկան բռնությունը պատժվում է բռնության ընդհանուր հոդվածներով:

Լայն տարածում ունեն ամուսնական ոտնձգությունները և կանանց դեմ բռնությունները: Ասիական զարգացման բանկի Հայաստանի զենդերային գնահատման մասին 2015թ. հուլիսի զեկույցում զենդերային բռնությունները, մասնավորապես՝ ընտանեկան բռնությունը նախանշվել էին որպես երկրի կանանց առաջ ծառայած լրջագույն խնդիրներից մեկը: Կառավարության ու կանանց կազմակերպությունների իրականացրած հետազոտությունները հաստատում էին, որ ընտանեկան բռնությունները լայն տարածում ունեն ու կանանց 25-ից 66 տոկոսը ենթարկվում է դրան (կախված ընտանեկան բռնության

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

սահմանման շրջանակից): Իշխանությունների կողմից ընտանեկան բռնությունների մասով չի իրականացվում արդյունավետ քրեական հետապնդում:

Բռնաբարության, ամուսնական ոտնձգությունների և ընտանեկան բռնության մասին հաղորդումները շարունակում են շատ քիչ լինել՝ հասարակության կողմից խարանի ենթարկվելու, կին ոստիկանների ու քննիչների բացակայության, ինչպես նաև երբեմն ոստիկանության կողմից քայլեր ձեռնարկելու դժկամության հետևանքով: Ըստ տեղական դիտորդների՝ ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասի վերաբերյալ ոստիկանությանը չեն հայտնում, որովհետև տուժողները վախենում են ֆիզիկական վնասից, անհանգստանում են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին կամ ամաչում են ընտանեկան խնդիրներն ի ցույց դնելուց: Եղել են նաև հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը դժկամություն է հանդես բերել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը, հատկապես Երևանից դուրս: Ըստ գործող օրենսդրության ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր: Նման դեպքերում տուժողը կարող է հրաժարվել մեղադրանք ներկայացնելուց, կամ բռնություն գործադրողի ճնշմամբ ետ վերցնել բողոքը կամ փոխել նախկին ցուցմունքը:

Երկու տեղական ՀԿ-ներ՝ Կանանց աջակցության կենտրոնը և Կանանց իրավունքների կենտրոնը ընտանեկան բռնության հարցերով թե՛ զծեր և երեք կացարան են ունեցել և տուժածներին տրամադրել են տարբեր ծառայություններ: Կացարանները բավարար չէին երկրում բոլոր տուժողների կարիքները հոգալու համար: Թեպետ կացարանները գործարկվում են միջազգային ֆինանսավորմամբ, սակայն չնչին իրատեսական այլընտրանքներ կային տեղի ռեսուրսների հաշվին կայուն ֆինանսավորում ապահովելու համար:

2010-2015թթ. Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիան արձանագրել է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից կանանց սպանության 30 դեպք: Կռալիցիայի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն, որը հրապարակվեց մայիսին, այս կանանց մեծ մասը մինչ սպանվելը օգնության համար դիմել են ընտանիքին կամ պետական հաստատություններին: Տեղի կազմակերպությունները պնդում էին, որ ոստիկանության անգործությունը և բռնությունների համար դատապարտվող ամուսինների համար նախատեսված մեղմ պատիժները նպաստում են նման սպանություններին: Տարվա ընթացքում մի քանի դեպք է եղել, երբ դատարանի կողմից տարիներ շարունակ կանանց նկատմամբ բռնություններ թույլ տված ամուսինների համար նշանակվել է նվազագույն պատժաչափ:

Հուլիսի 8-ին Վլադիկ Մարտիրոսյանը կացնով հարձակվել էր նախկին կնոջ՝ Թագուհի Մանսուրյանի և նրա ծնողների վրա: Մանսուրյանի մայրն անմիջապես մահացել էր, իսկ Մանսուրյանն ու ի հայրը ծանր վիճակում հիվանդանոց էին տեղափոխվել: Մարտիրոսյանը

նախկինում դատապարտված էր ընտանեկան բռնության համար, բայց պատիժը 6 ամսվա պայմանական ազատազրկում էր:

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն այն չի արգելում սեռական ոտնձգությունները: Չնայած հրապարակային տվյալներ վերջին շրջանում խնդրի ծավալների վերաբերյալ չկան, դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն: Ասիական զարգացման բանկի Հայաստանի գենդերային գնահատման մասին 2015թ. հուլիսի զեկույցում աշխատավայրում տեղ գտնող սեռական ոտնձգություններն աշխատանքի ընտրության ու առաջխաղացման հնարավորությունների մասով սահմանափակող գործոն են կանանց համար:

Վերարտադրողական իրավունքներ. Ըստ օրենքի զույգերը և անհատներն իրավունք ունեն առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության որոշում կայացնել, թե երբ, ինչ պարբերականությամբ և քանի երեխա են ունենալու, տնօրինել իրենց վերարտադրողական առողջությունը և ունենալ միջոցներ և անհրաժեշտ տեղեկատվություն դրա համար: Երեխաների թվի ու երեխաների ծնվելու պարբերականության վերաբերյալ որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում, որտեղ և գտնվում են ծննդատներ: Եղել են հաղորդումներ, որ հատկապես գյուղական և հեռավոր բնակավայրերում կանանց համար չի ապահովվել ընդհանուր առողջապահական ու վերարտադրողական առողջության ծառայությունների բավարար հասանելիություն: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 2014թ. զեկույցում մտահոգություն էր հայտնվում հակաբեղմնավորիչների սահմանափակ առկայության վերաբերյալ:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ դատախրավական համակարգում, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության ու զբաղվածության հարցերի հետ կապված: (տես՝ Մաս 7. դ): Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում (տես՝ Մաս 3):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի զեկույցում մտահոգություն էր հայտնվում ընտանիքում ու հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց դերի վերաբերյալ արմատացած նահապետական վերաբերմունքի ու կարծրատիպերի վերաբերյալ: Ըստ գենդերային հարցերով փորձագետների կրթական համակարգը բոլոր մակարդակներում ամրապնդել է այս մոտեցումները: Համաշխարհային բանկի 2015թ. ուսումնասիրությամբ դիտարկվել են ավագ դպրոցի ուսումնական նյութերն ու

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

դասընթացները և պարզվել է, որ գրքերում նախապատվություն է տրվում տղամարդկանց ներկայացման բոլոր ձևերում՝ տեքստեր, նկարագրադրումներ, մինչդեռ կանայք առավել քիչ տեսանելի են ու պատկերված են կարծրատիպային եղանակով:

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական ընտրություն. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության ծնվելու պահին տղա-աղջիկ հարաբերակցությունը 2014թ. համեմատ՝ 114 տղա 100 աղջկա դեպքում, իջել է, և տարվա առաջին կեսին կազմել է 112 տղա 100 աղջկա դեպքում: 2015թ. մայիսին Առողջապահության նախարարությունն ու Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունը հաստատեցին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները կանխելու միջնաժամկետ ծրագիր և ձևավորեցին աշխատանքային խումբ, որը համակարգում է կառավարության ջանքերն այս հարցի առնչությամբ: Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի՝ կառավարության, տեղական ու միջազգային ՀԿ-ների համատեղ ծրագրերով հնարավոր եղավ խնդրի վերաբերյալ իրազեկվածությունը մեծացնել, ինչի շնորհիվ էլ տարվա առաջին կեսին գրանցվեց փոքր դրական տեղաշարժ:

## Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից: Ծննդյան գրանցումը ծնողների պարտավորությունն է, և ծննդյան վկայականը պետք է ներկայացվի հիվանդանոցից դուրս գրվելիս: Ծննդյան վկայականի բացակայության դեպքում հանրային ծառայությունների մատուցումը կարող է մերժվել:

Կրթություն. Թեպետ մինչև իննամյա կրթությունն անվճար է և պարտադիր, սակայն գործնականում այն չի կիրառվել համատարած կերպով: Ըստ ՄԱԿ-ի Երեխաների հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ-ի) հաշմանդամություն ունեցող և սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները կանոնավոր կերպով բախվել են համակարգային անբարենպաստ պայմանների կապված դպրոցի հասանելիության և կրթական ծառայություններից օգտվելու հետ (տես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց մասին հատվածը ստորև): Կարիքավոր ընտանիքների և համայնքների երեխաների համար հասանելի չեն եղել վաղ տարիքի կրթական ծրագրերը, չնայած նախադպրոցական կրթության շրջանակն ընդլայնելու կառավարության ջանքերին: Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մուսուլմանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է ութերորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություն էր հայտնել տեղական համայնքում Միրիայից, Իրաքից և Ուկրաինայից ժամանած փախստական երեխաների ինտեգրման վերաբերյալ: Դպրոցական ենթակառուցվածքների վատ վիճակը, հատկապես նախադպրոցական հիմնարկներում՝ ջեռուցման, ջրամատակարարման,

սանիտարահիգիենիկ ոչ համարժեք պայմանների հետ միասին շարունակում էին մնալ խնդրահարույց, իսկ դպրոցների գերակշիռ մասը չէր համապատասխանում շենքերի ամրության հիմնարար պահանջներին:

Երեխաների նկատմամբ բռնություն. Թեպետ երեխաների հանդեպ բռնությունների վերաբերյալ համապարփակ վիճակագրություն չկար, սակայն նման բռնությունները կարծես թե խնդիր էին հանդիսանում, հատկապես նրանց համար, ովքեր բնակվում էին հաստատություններում և սոցիալապես խոցելի ընտանիքներում: Հայկական և ադրբեջանական ուժերի միջև կրակահերթերի անկանոն փոխանակումների հետևանքով սահմանամերձ բնակավայրերի երեխաների համար առկա էր վիրավորվելու կամ մահացու վնասվածք ստանալու վտանգ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխաների հանդեպ բռնությունների վերաբերյալ պաշտոնական ու ամփոփված տվյալների բացակայությունը սահմանափակում էր կառավարության հնարավորությունները մշակելու համապատասխան արձագանքման ազգային ծրագրեր կամ կանխարգելման միջոցներ: Չեն եղել պաշտոնական ուղղորդման մեխանիզմներ բռնության, այդ թվում՝ սեռական բռնության գոհ դարձած երեխաների համար, իսկ երեխաների հետ աշխատող մասնագետների համար, բացառությամբ՝ բժիշկների, ուղղորդման պարտադիր պահանջ չի եղել:

Կանանց ռեսուրս կենտրոնն արձանագրում է անչափահասների նկատմամբ սեռական բռնությունների ավելացում և նկատում էր, որ իրենց կողմից աջակցություն ստացած գոհերն ավելի փոքր տարիքի երեխաներ էին, քան նախկինում: Կենտրոնը նաև հաղորդում էր, որ որոշ դեպքերում մանկահասակ գոհերն իրենց համայնքներում ծաղրի ու անարգանքի են ենթարկվել, հեռացվել դպրոցից:

Վաղ և պարտադրված ամուսնություն. Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխաների (և տղա, և աղջիկ) 7 տոկոսն ամուսնանում է մինչ 18 տարին լրանալը, որը օրենքով սահմանված ամուսնության նվազագույն տարիքն է: Աղջիկների շրջանում վաղ ամուսնություններն առավել տարածված են եզդիական համայնքներում, սակայն կառավարությունը դրանց մասշտաբներն արձանագրելուն կամ այդ պրակտիկան վերացնելուն ուղղված քայլեր չի ձեռնարկել:

Երեխաների սեռական շահագործում. Հակաթրաֆիկինգային հոդվածներով օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և խախտումների դեպքում սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում՝ կախված ծանրացուցիչ հանգամանքների առկայությունից: Մանկական պոռնկագրությունը պատժվում է մինչև յոթ տարի ազատազրկմամբ: Կամքի համաձայն սեռական հարաբերություններ ունենալու տարիք է համարվում 16 տարին:

Հաստատություններում գտնվող երեխաներ. Կառավարության կողմից գործարկվել են սոցիալական պաշտպանության 36 հաստատություններ, որոնցում գտնվել են շուրջ 3.800 երեխաներ, որոնց մեծ մասի ծնողներից առնվազն մեկը ողջ է: Փորձագետները հավատացած էին, որ կոռուպցիան և աղքատությունը հաստատությունների բեռնաթափմանը խոչընդոտող



հիմնական գործոններն էին, քանի որ սոցիալական պաշտպանության հաստատություններին տրամադրվող պետական ֆինանսավորման չափը պայմանավորված է հաստատությունում գտնվող երեխաների թվով և կային շատ ընտանիքներ, որոնք ի վիճակի չէին հոգալ իրենց երեխաների կարիքները: Միջին հաշվով կառավարության կողմից տարեկան այդ հաստատություններին ուղղվում է շուրջ 5.46 միլիարդ ՀՀ դրամ (13 միլիոն ԱՄՆ դոլար): Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և մյուս դիտորդների՝ հաստատություններում գտնվող երեխաների համար առկա էր ֆիզիկական ու հոգեբանական բռնության վտանգ մյուս երեխաների ու հաստատության անձնակազմի կողմից: ՅՈՒՆԻՍԵՖ-ը պետական պաշտոնյաների ուշադրությանն է ներկայացրել սննդի ու առողջապահական ստանդարտների բազմաթիվ խախտումներ, սակայն իրավասու մարմինների կողմից սակավաթիվ բարելավումներ են կատարվել: Կառավարությունը, հատկացված օտարերկրյա ֆինանսավորման շրջանակում, աշխատել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՀԿ-ների հետ՝ հաստատություններում երեխաների թիվը կրճատելու ու համայնքային մակարդակում ընտանեկան խնամքի այլընտրանք առաջարկելու, ինչպես նաև հատուկ կարիքներով երեխաների համար ներառական դպրոցների հետ կապված հարցերի շուրջ:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տես՝ Ծնողների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության [ամենամյա զեկույցը՝](http://travel.state.gov/content/childabduction/en/legal/compliance.html)  
[travel.state.gov/content/childabduction/en/legal/compliance.html](http://travel.state.gov/content/childabduction/en/legal/compliance.html).

### **Հակասեմականություն**

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չեն եղել:

### **Մարդկանց թրաֆիկինգ**

Տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը  
<http://www.state.gov/j/tip/rls/tiprpt> էջում:

### **Հաշմանդամություն ունեցող անձինք**

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել հասանելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված են: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են ֆիզիկապես ոչ հասանելի, ինչի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը, քանի որ ընտրությունների ժամական այս շենքերը ծառայում են որպես ընտրական տեղամասեր: Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն արդյունավետ կերպով չի իրականացրել իր այս գործառույթը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2012թ. ուսումնասիրության տվյալներով հաշմանդամություն ունեցող 5 երեխայից մեկը դպրոց չէր հաճախում: Սա պայմանավորված էր թե խտրականությամբ, թե շինություններում հարմարությունների բացակայությամբ: Տեստեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 2014թ. զեկույցում նշվում էր, որ չնայած ներառական դպրոցների ցանցի մեծացմանն ուղղված պետության ջանքերին, պաշտոնյաներն այդ քաղաքականությունն ամբողջովին չէին իրագործում: Օրենքի համաձայն մինչև 2025թ. բոլոր դպրոցները դառնալու են ներառական:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդիկ խտրականության են հանդիպել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնման, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար:

Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով: Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները:

Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսն աշխատանք չունի: 2015թ. հուլիսի կառավարությունը ներմուծեց պարտադիր քվոտաներ 100-ից ավել աշխատող ունեցող պետական ու մասնավոր հիմնարկներում հաշմանդամություն ունեցողներին աշխատանքի ընդունելու համար:

Լրատվամիջոցներում հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո հաշմանդամություն կարգերը սահմանող պետական մարմնի՝ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի հետ կապված կոռուպցիոն

դրսևորումների ու կամայական որոշումների մասին: Հաշմանդամության կարգի հիման վրա այնուհետև որոշվում է տարբեր սոցիալական նպաստների նշանակման հարցը:

### **Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ**

Խտրականության դեմ պայքարի օրենսդրությունը չի տարածվում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա: Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարող օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏԻ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս: Հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ շարունակում էր մնալ խիստ բացասական և հասարակությունն, ընդհանուր առմամբ, դիտարկում էր նույնասեռականությունը որպես հիվանդություն: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ զբաղվածություն, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների հասանելիություն: Տրասգենդեր անձինք հասկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից:

Ըստ «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից տարվա ընթացքում կատարած ուսումնասիրության տրանսգենդեր անձինք, ովքեր տարվա ընթացքում կամեցել են սեռափոխություն կատարել բախվել են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են՝ բացասական վերաբերմունքը, տեղեկատվության ու իրավակարգավորումների բացակայությունը: Մա հանգեցրել է բազմաթիվ առողջական ու այլ խնդիրների, որոնք պայմանավորված են առանց բժշկի վերահսկողության հորմոնների ընդունման, ստվերային վիրահատությունների հետ և սեռափոխությունից հետո անձնագիր ստանալու ու սեռափոխությունն ամրագրելու հետ:

Մայիսին «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Հայաստան) ՀԿ-ը հրապարակեց իր ամենամյա ուսումնասիրությունը ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների վերաբերյալ: Ըստ ուսումնասիրության՝ հիմնական կուսակցությունների ներկայացուցիչները և իշխանություններին մոտ կանգնած լրատվամիջոցները ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների հանդեպ «ատելություն են քարոզել»: 2015թ. դեկտեմբերի սահմանադրական հանրաքվեով նույնասեռական ամուսնություններն արգելելու հարցի հանրային քննարկումների ընթացքում թեժացել էր գեյերի դեմ ուղղված հոետորաբանությունը: Ըստ ուսումնասիրության ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ եղել են ֆիզիկական բռնություններ, բռնության սպառնալիքներ, շանտաժ և ոտնձգություններ: Ոստիկանությունը չի արձագանքել նման չարաշահումների մասին հաղորդումներին և ժամանակ առ ժամանակ նրանց կողմից է եղել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ոչ իրավաչափ

Մարդու իրավունքների գեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

վերաբերմունք՝ հետևելու ու հալածանքների տեսքով: Ըստ զեկույցի՝ իրավասու մարմինների կողմից որևէ քրեական հետապնդում չի իրականացվել 2015թ. ընթացքում աստելության քարոզման վերաբերյալ ոստիկանությանը ներկայացված հաղորդումների հիման վրա: ԼԳԲՏԻ անձինք նույնպես խուսափում էին ոստիկանություն հաղորդում ներկայացնելուց, քանի որ վախենում էին բացահայտվելուց ու բողոքի պատճառով հավելյալ խտրականության ենթարկվելուց:

Ըստ լրատվամիջոցների հրապարակումների՝ նոյեմբերի 6-ին Ազգային ժողովում ընթացող քննարկման ժամանակ իշխող Հանրապետական կուսակցության երեք պատգամավոր, այդ թվում՝ Ազգային ժողովի փոխխոսնակը, հակա-ԼԳԲՏԻ խոսակցություն են ծավալել, իսկ պատգամավորներից մեկը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը խրախուսող կատակներ է արել:

Ըստ ՓԻՆՔ Հայաստանի՝ մայիսին պարուսույց Հարութ Բաղդասարյանն ամերիկահայ Գայլ Խանդիկյանին հեռացրել է «Կարին» ազգագրական պարային համույթից, երբ նրա իմացել է որ վերջինս գեյ է: Ըստ լրատվական հաղորդումների պարուսույցը Խանդիկյանին ասել է, որ նա «ազգին չի պատկանում» և «հայ չէ» և իրավունք չունի հայկական պարեր պարել, քանի որ գեյ է:

Լրատվական տարրերի կողմից եղել է հակա-ԼԳԲՏԻ քարոզչություն: ԼԳԲՏԻ ակտիվիստները, ինչպես նաև ոլորտում աշխատող իրավապաշտպանները ստացել են սպառնալիքներ սոցիալական ցանցերում և աստելության խոսքի թիրախ դարձել:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանք կարող են ենթարկվել բռնության ծառայակիցների կողմից: Ազատումը հիմնավորվում էր հոգեկայրաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ:

## **ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սոցիալական խարանդ**

Ժողովրդագրության և առողջության հարցերի վերջին հետազոտությամբ (անցկացվել է 2010թ.) հարցված կանանց 86 և տղամարդկանց 84 տոկոսը նշել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցողների նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին:

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների

նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից:

«Իրական աշխարհ, իրական կյանք» ՀԿ-ը գրանցել է այն դեպքերը, երբ արտագնա աշխատանքի ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր դարձած տղամարդիկ թաքցրել են այդ հանգամանքն իրենց կանանցից: Վարակը փոխանցելով իրենց կանանց՝ այս տղամարդիկ, ըստ հաղորդումների, արգելել են նրանց բուժում կամ բուժօգնություն ստանալ, սակայն իրենք տղամարդիկ բուժում են ստացել: Հիշյալ ՀԿ-ը փաստում էր, որ սա մատնացույց է անում մի կողմից ընտանեկան բռնության, մյուս կողմից էլ հասարակության կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ն ամոթալի երևույթ համարելու փաստը: Medialab.am-ում հունվարի 24-ին ներկայացված էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-վարակակիր հղի կնոջ ողիսականը, ում հանդեպ եղել էր զգալի խտրականություն բուժանձնակազմի կողմից հղիության վարման ողջ ընթացքում. նրան առանձնացրել էին մյուս հիվանդներից և բուժանձնակազմը չէր ցանկացել նրան բուժօգնություն ցուցաբերել ծննդաբերելիս:

## ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Առողջապահության նախարարության Առողջապահության տեսչությունը պատասխանատու է աշխատանքային անվտանգության ու պաշտպանության ստուգումների համար, իսկ Զբաղվածության պետական գործակալությունը ստանում է ծանուցումներ աշխատանքից ազատելու մասսայական դեպքերի վերաբերյալ՝ նորահայտ գործազուրկների համար աշխատանքի հնարավորություններ դիտարկելու նպատակով: Աշխատանքային իրավունքները միշտ չէ, որ կառավարության կողմից արդյունավետորեն ապահովվել են:

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումները եղել են ոչ համարժեք: Չեն եղել կոնկրետ պատժամիջոցներ միավորում կազմելու կամ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքները խախտելու համար. վարչական և դատական ընթացակարգերը զուգակցվել են երկար ձգձգումներով ու բողոքարկումներով:

Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ու քիմիական արդյունաբերության ոլորտի արհմիությունների: Ըստ տեղական դիտորդների՝ պաշտոնապես արհեստակցական միություն ստեղծելու համար գործնականում պահանջվում է գործատուի ոչ պաշտոնական համաձայնությունը:

### **բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում**

Օրենքով արգելվում են հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները և կառավարությունն արդյունավետորեն իրականացրել է այդ օրենքները: Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումները եղել են համարժեք: Խախտումների համար նախատեսվում է պատիժ 5-ից 15 տարվա ազատազրկման տեսքով, որը բավարար խիստ պատիժ է խախտումները կանխելու համար: Տարվա առաջին տասն ամիսների ընթացքում Քննչական կոմիտեի կողմից հարուցվել է 4 քրեական գործ աշխատանքային թրաֆիքինգի կասկածանքով:

Տես նաև՝ Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության գեկույցը [www.state.gov/j/tip/rls/tiprpt](http://www.state.gov/j/tip/rls/tiprpt) էջում:

### **գ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք**

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքի արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Չկար պատժամիջոցների բավարար մակարդակ, որը կապահովեր այս պահանջների կատարումը:

Մարդու իրավունքների գեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության և Աշխատանքի միջազգային կազմակերպության պատրաստած «Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015թ.» վերլուծական զեկույցի՝ 5-17 տարեկան երեխաների 11.6 տոկոսն աշխատում են: Աշխատող երեխաների մեծ մասը ներգրավված են գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում, իսկ մյուսներն աշխատել են առևտրի, նորոգման, փոխադրումների, պահպանության, կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտում: Երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով: Հետազոտության տվյալների համաձայն զբաղված է եղել 39.300 երեխա, որոնցից 31.200-ը ներգրավված են եղել վնասակար աշխատանքում, մասնավորապես՝ վնասակար ոլորտներում (400 երեխա), վնասակար զբաղմունքներում (600 երեխա), երկար աշխատաժամերով աշխատանքներում (1.200 երեխա), ծանր բեռների փոխադրում մեծ հեռավորությունների վրա (17.200 երեխա) և վնասակար աշխատանքի այլ ձևերում (23.600 երեխա):

Տես նաև՝ ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները [www.dol.gov/ilab/reports/child-labor/findings/](http://www.dol.gov/ilab/reports/child-labor/findings/) էջում:

## դ) Աշխատանքային կամ մասնագիտական խտրականություն

Նոր սահմանադրությամբ արգելվում է ցանկացած տեսակի խտրականությունը, լինի դա ըստ սեռական, ռասայական պատկանելության, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկ առանձնահատկությունների, լեզվի, կրոնի, քաղաքական հայացքների, ազգային փոքրամասնությունների պատկանելության, գույքի, ծննդի, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական և սոցիալական հանգամանքների: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել օրենսդրության կիրառումը: Չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու այս կանոնակարգերի կիրառումը և եղել են աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումներ պայմանավորված սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ: Գործող վարչական պատժամիջոցները բավարար չեն երևույթը կանխելու համար:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: Տարվա ընթացքում

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Համաշխարհային բանկի կողմից ներկայացրած տվյալների համաձայն միջնակարգ կրթություն ունեցող կանանց մեկ երկրորդը և բարձրագույն կրթություն ունեցող կանանց մեկ երրորդը ներգրավված չեն վարձատրվող որևէ աշխատանքում: 2015թ. Ասիական զարգացման բանկի «Հայաստան. գենդերային գնահատում» զեկույցում մատնանշվում էր, որ բազմաթիվ կանայք ներգրավված են սովերային ոլորտում, ինչը նրանց գրկում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանություններից: Կանայք նաև մեծամասնություն էին կազմում գրանցված գործազուրկների շրջանում, իսկ աշխատանք գտնելու համար կանանցից ավելի երկար ժամանակ էր պահանջվում: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կատարած «Գենդերային հավասարության անհամապատասխանությունների ախտորոշիչ ուսումնասիրության» համաձայն, որը հրապարակվեց մարտին, կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև անհամապատասխանությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում կազմում էր շուրջ 36 տոկոս:

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: Չնայած որ խտրականության այս դրսևորումը բավական լայն տարածում ուներ, իշխանությունները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել այն մեղմելու համար: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարետես կանայք: Գործազուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳԲՏԻ անձինք, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես զբաղվածության հարցերում հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

### **ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ**

Ամսական նվազագույն աշխատավարձը կազմել է 55.000 դրամ (115 ԱՄՆ դոլար): 2015թ. ամենավերջին պաշտոնական հաշվարկներով ծայրահեղ աղքատության շեմը կազմել է ամսական 24.109 դրամ (50 ԱՄՆ դոլար), իսկ ընդհանուր աղքատության շեմը կազմել է 41.698 դրամ (87 ԱՄՆ դոլար): Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ:

Մարդու իրավունքների զեկույց 2016թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո



Համապատասխան մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ո՛չ օրինական, ո՛չ սովերային ոլորտներում: Առողջապահական պետական տեսչությունը, որտեղ աշխատում էին 60 պայմանագրային աշխատանքային տեսուչներ, պատասխանատու է աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանման և աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Ռեսուրսները, տեսչական ստուգումները, հատուցումները չեն եղել համարժեք, և աշխատանքային ստանդարտների խախտումների համար պատժամիջոցներն էլ բավարար չեն եղել այդ խախտումները կասեցնելու համար:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողներին ընդունել են 10-30 օր չձևակերպված ոչ վճարովի «փորձաշրջանով»: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց, քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվում էին այլ աշխատանք չլինելու հանգամանքից և անտեսում էին համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման խնդիրները և բնապահպանական մտահոգությունները: Երկրի աշխատողների մոտ կեսն աշխատանք է գտել սովերային ոլորտում, որտեղ նրանք խոցելի են գործատուների չարաշահումների տեսանկյունից և չունեն պետական պաշտպանություն:

Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին, և տարվա ընթացքում գրանցվել է մահացու ելքով մի քանի աշխատանքային պատահար: Գազալցակայաններում տեղի ունեցած մի քանի պայթյունների և հանքավայրերում ու շինհրապարակներում տեղի ունեցած պատահարների հետևանքով գրանցվել են մահվան ու վնասվածքներ ստանալու դեպքեր, ինչը պայմանավորված է այդ ոլորտներում անվտանգության ստանդարտների ու դրանց կիրառման թերացումներով: Միջադեպերից հետո իրավասու մարմինները հայտարարել են, որ գազալցակայաններում խստացվել են անվտանգության նկատմամբ վերահսկողությունը ու տեսչական ստուգումները: Հաշվի առնելով երկրում տիրող գործազրկության բարձր մակարդակը՝ աշխատողները սովորաբար չեն թողնում այնպիսի աշխատանքները, որտեղ առողջության կամ անվտանգության համար վտանգավոր իրավիճակներ կան: Նման իրավիճակներում համապատասխան մարմինների կողմից աշխատողներին

պաշտպանություն չի ապահովվում, իսկ վերջիններս էլ սովորաբար իրենց իրավունքների խախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում: